

Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Է Ն ^{*)}

„Ջօն Գաբրիել Բօրկման“ (Ջօն Գաբրիելի fixe ydee-ն. — Բօրկման իր առանձնավարում. — Վիլհելմ Ծօլդալ. — Ելլա Րէնթհայմ. — Գունհիլդի Կ-րազները. — Էրհարդ. — Տիկին Վիլմոն. — Ելլալի և Բօրկմանի բացատրութիւնները. — Բօրկմանի տեսիլը և վախճանը. — Բօրկմանի իդէալիզմը. — Հիանդոտ իդէալիզմի „սառնութիւնը“. — Իրսէն հակաիդէալիստ)։ — „ՄԻՐ ԱՆՆԻՐ ԱՆՈՒԹԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ“ (Իսկական և quasi արուեստագէտը. — Բուրէլի ստեղծագործութիւնը. — Իրենէն իբրև մօդէլ. — Իրենէի անկումը. — Բուրէլի ճակատագիրը. — Մալեա. — Ուլֆհայմ. — Իրենէի և Բուրէլի հանդիպումը. — Սթափուած մեռելները“. — Ինչպէս պէտք է հասկանալ „գրամատիկական վերջաբանի“ հիմնական հայեացքները)։ — Վերջաբան։

XVII

Իրսէն, որ իբրեւ մեծ դրամատուրգ վաղուց էր արդէն յարգարել իր փառքի ուղին, կամաց-կամաց մօտենում էր իր կեանքի արեւմուտքին. նրա հսկայական, փարթամ գլուխը հետզհետէ արծաթափայլ էր դառնում, առնական բերանի բնորոշ ծալքերը, ինչպէս և լայնարձակ ճակատի ակօսները աւելի և աւելի էին խորանում։ Սակայն նրա դողդոջուն ձեռների մէջն անգամ բազմարդիւն գրիչը դարձնալ պահպանել էր զօրեղ ստեղծագործութեան աւիւնը, որի բռնկումներից դեռ հանճարի բիւրեղներ էին ցայտում։ Այս պատճառով զարմանալի չէ ի հարկէ, որ նրա ամեն մի «նորութիւնը» քաղաքակիրթ մարդկութեան լայնածաւալ շրջաններում մի տեսակ նկարչային, լարուած անհամբերութեամբ էր կլանում։ Այնքան մեծ էր և համատարած իրսէնի հռչակը, որ նրա երկերը լոյս էին տեսնում ոչ միայն Նօրվէգիայում, այլ և միաժամանակ եւրոպական զանազան կենդրոններում՝ առնուազն գերմաներէն, ֆրան-

*) Տես „Մուրճ“ № 8.

սերէն և անգլիերէն լեզուներով: Դեռ սկսնակ ուսանող էի երբ 1896-ի վերջերին լոյս տեսաւ «Ջոն Գաբրիէլ Բօրկման» («John Gabriel Borkman») — յիշում եմ այն զօրեղ ցնցումը, այն ահազին աղմուկը, որ առաջ բերեց իրսէնի այս նոր դրաման արտասահմանեան թէ մամուլի չրջաններում և թէ թատրոնական կեանքում (Բերլինի նշանաւոր «Deutsches Theater»-ում շաբաթներով շարունակ «Ջոն Գաբրիէլ Բօրկման» էին ներկայացնում): Իրսէնեան երկսեռ համայնքի համար դա մի ցնծութեան և յազթանակի տօն էր յանուն իրանց ծերունազարդ «առաքեալի»: Իսկ հակառակորդների համար՝ ատամները կրճաղցնելու և զրիչները սրելու մի յարմար առիթ: Ոմանք Ջոն Գաբրիէլի ողբերգական վախճանի մէջ տեսնում էին անհատականութեան գաղափարի անակոծելիւնը և առհասարակ ամբողջ դրամայի մէջ՝ իդէալիզմի անկումը, անդօրութիւնը — իսկ ոմանք անհատականութեան մարտիրոսութիւն և իդէալիզմի անդդուելի ոյժը:

Այս երկու ծայրերի մէջ սակայն անհերքելի է այն հանգամանքը, որ «Ջոն Գաբրիէլ Բօրկման» մի կողմից հեղինակի ներքին, սեփական պահանջների, ընդհանուր աշխարհայեացքի և միւս կողմից՝ ժամանակի, չրջապատող հանգամանքների ծնունդն էր: Ջոն Գաբրիէլի նման մի հերոսով իրսէն անհատականութեան սկզբունքին տուեց նոր գունաւորում, բովանդակութեան նոր աստիճանաւորում: Սրա հետ միայն չի կարելի ուրանալ ի հարկէ և այն հանգամանքը, որ նա նորից կամեցաւ պատկերացնել ժամանակակից ամենավտանգաւոր ուրուականներից մէկի, ոսկէ հորթի ոյժը: Բօրկմանը ներկայացնում է եթէ ոչ այս հորթին ստրկապէս երկրպագող, այլ տնտեսական թագաւորութեան մէջ մի նոր նապօլէօն դառնալու հիւանդութեամբ բռնուած մի յաւադար, որի վերջնական նպատակն է փողի, նիւթական հարստութեան ոյժով բաղդաւորացնել ամբողջ մարդկութիւնը և որը սակայն ճակատագրի անողոր հաբուածների տակ պէտք է ընկճուէր, սոսկալի հիասթափութեան պիտի մատնուէր և իբրեւ «խտորոտող» մի հանճար խելագարութեան անդունդի եզերքին միայն գտնէր իր վախճանը:

Անցնենք սակայն դրամային, որից և կը պարզուի այս նոր նապօլէօնի ամբողջ էութիւնը իր տարրեր զիմագծերով:

Ջոն Գաբրիէլի դրամայի մի մասը դրամայի սկզբնաւորութիւնից առաջ է կատարուած: Նա նախկին բանկի մի վերատեսուէ է, որ իր նախանձելի շիրքից և փառքի բարձրութիւններից իջած՝ ութ տարի շարունակ առանձնասենեակի մոռլլ պատերումն էր անցկացնում իր կեանքը: Անցեալի ճնշող ստուեր-

ները նրան հանգիստ չեն տալիս, միւս կողմից այս անախորժ ուրուականները երբեմն փարատելու համար նա ապագայ նորանոր յաջողութիւնների երազովն է մխիթարուում:

Բայց ինչպէս էր կայանում այս առանձնացած վերատեսչի, այս «հիւանդ գայլի» մութ անցեալը, Ջոն Գարրիէլ մի հանքահանի որդի էր և համոզուած էր, որ իրան է միայն վիճակուած երկրի տակն ամբարուած միլիոնները լոյս աշխարհ հանել, նա համարեա միստիկական զգայնութեամբ էր վերաբերուում դէպի այս ծածուկ, անմշակ զանձերը, որոնց ձայնը կարծես նա իր նուրը լսողութեամբ լեռներով անցնելիս շարունակ լսում էր: Միայն անձնական շահը չէ Բօրկմանի նպատակը՝ այլ նրա գլխաւոր մտադրութիւնն է իր զիւտերով բաղդաւորացնել հազարաւոր մարդկանց, իր նպատակին հասնելու և առհասարակ խոշոր ձեռնարկութիւններ սկսելուն նա ձգտում է ամենից առաջ դիրք ձեռք բերել և բարձրացնել իր վարկը: Նա դառնում է բանկի վերատեսուչ, բայց ինչ գնով: Ամբողջովին յափշտակուած իր հեռաւոր նպատակով՝ նա այլ եւս ոչ մի սրբութիւն չէր ճանաչում. պատրաստ էր ամեն ինչ ոտնակոխ անել, միայն թէ մի քայլ աւելի արած լինի դէպի այդ նպատակը: Այս խտտափրտ, չոր և անողոր հանքահանի հողին մեղմութեան մի հետք էր միայն կրում՝ դա էլլայ Բէնթհայմի սէլն էր: Սակայն նա պատրաստ է ամենայ հետեւողականութեամբ ոտնակոխ անել նաեւ այս սէրը: Եւ ինչ զղուելի կոմպրոմիսով: Փաստաբան Ջինկել, որի աջակցութեամբ նա յոյս ունէր վերատեսուչ դառնալ, սիրում է էլլային: Բօրկմանը նրա օժանդակութիւնը վայելելու և նրա վերաբերմամբ մրցակից չը հանդիսանալու համար հրաժարուում է էլլայից և ամուսնանում այս վերջինի քրոջ՝ Գունհիլդի հետ, որին նա ամենեւին չէր սիրում: Բայց Բօրկման որքան խտտափրտ էր իր այս տգեղ քայլով՝ նոյնքան էլ կարճամիտ—նա անընդունակ էր նախատեսել, որ էլլայից յօժարակամ հրաժարուելը դեռ չէ նշանակում նրան Ջինկելի գիրկը մատնել: Էլլան երկուսից էլ իր երեսը զղուանքով չուռ է տալիս:

Ջինկելը էլլայից զրկուելով՝ ընականաբար ամեն ջանք ի գործ պիտի դնէր իր կարծեցեալ հակառակորդից՝ Բօրկմանից վրէժխնդրի լինելու: Վերջինիս գաղտնիքներին նա ամենայն մանրամասնութեամբ ծանօթ էր, գիտէր թէ խարդախութիւնների և կեղծիքների ինչ ծանրութիւն է բարձուած նորընտիր վերատեսչի ուսերին—ինչո՞ւ ուրեմն չօգտուել հանգամանքից և նրան դատաստանի մատնել: Եւ ահա վաղեմի նպատակին բաւական մօտեցած՝ Բօրկմանին յանկարծ մի սոսկալի հարուած է

համեմատեալ նա ամբաստանուած է իբրեւ խարդախ և գող. դատարանը նրան հինգ տարուայ բանտարկութեան է դատապարտուած։ Նա ընկնում, արատաւորում է՝ արատաւորելով և անբաղդադանելով իր հետ նաեւ մի ամբողջ ընտանիք՝ զուգէ և ուրիշ բազմաթիւ մարդկանց։

Բանտից դուրս գալուց յետոյ, ինչպէս նկատեցինք, նա ամբողջ 8 տարի առանձնութեան մէջ է ապրում—թէ և իր ընտանեկան յարկում, բայց ոչ որքի հետ չէր տեսնուած։ Ընտանիքի միւս անդամները՝ իր կինը (Գունհիլդ) և միակ որդին (Էրհարդ) ներքին յարկումն էին ապրում, իսկ ինքը՝ վերել։ Նա ոչ միայն ոչ որքի հետ չէր տեսնուած, այլ և ամենեւին տնից չէր դուրս գալիս. նոյն իսկ «երեկոներն անգամ խուսափում էր»։ Փանի անգամ դուրս գալու նպատակով Բօրկման նախասենեակում մօտեցել էր իր վերարկուն վերցնելու, բայց մի անվտանգ և անվճարական մղումով իր քայլերը նորից ուղղել էր դէպի իր առանձնավայրը։ Այստեղ նա իրան երեւակայում էր իրբեւ գնդակահար եղած մի արծիւ կամ ս. Հեղինէում չըթթալուած նապօլէօն։ Չէ որ նա երբեմն արքայավայել փառքի մէջ էր—մի փառք, որի պճնադարդ ցուցանակի վրայ չքեղութեան մի նշանախէց անգամ չէր պակասում։ «Նա սլոտում էր քառածի կառքով՝ ճիշտ այնպէս, ինչպէս թագաւորը. ստիպում էր մարդկանց խոնարհուել իր առաջ՝ ինչպէս թագաւորի առաջ։ Նրան ամենքը, ամբողջ երկիրը, մինչև իսկ ուղղակի իր անունովն էին կոչում»՝ ճիշտ այնպէս, ինչպէս թագաւորին—«Ջօն Գարրիէլ, Ջօն Գարրիէլ»։ Ամենքը շատ լաւ էին ճանաչում նրան, գիտէին թէ ինչ ոյժ էր Ջօն Գարրիէլը—դառնութեամբ և հեզնախառն շեշտով նկատում է իր կինը։

Իսկ այժմ—ճակատագրի անողոք հարուածից ընկճուած՝ նրա հողին կատաղի մրրկի մի ծով էր ներկայացնում, որի վրայով սակայն նա յոյս ունէր իր բաղդի նաւը զեկալարել։ Արդարեւ, ծանր հիասթափութեան ճնշումը կարծես այնքան էլ յուսահատական չէր այս կամաւոր լանտարկիալի համար։ Նա իր առանձնավայրում դեռ իր նախկին ծրագիրներովն էր ապրում. փայլուն ակնկալութիւններից, վարդազոյն երազներից արամսւղիբ չէր բաժանուելու—նա յոյս ունէր ոչ միայն իր անունն արատաւորող խայտառակ բիծը մաքրել, այլ և բարձրանալ փառքի այն գագաթնակէտին, որին նա ձգտում էր սոսկալի անկումից առաջ։ Կատաղի առիւծը, կամ ինչպէս իր կինն էր սասում, «հիւանդ գայլը» իր առանձնավայրում մտայլ մտորումների յորձանքի մէջ թաղուած՝ ահա թէ երբեմն ինչպէս գիտէր

յոխորդալ—բայց ապագայի անգոյն հեռանկարի մէջ օգային ամբողջներ էր միայն, որ նա կառուցանում էր:

Ջոն Գաբրիէլին պէտք է բեմի վրայ տեսնել, նա մի տարիքաւոր մարդ է—վաթսունից անց—սե սիւրտուկով, սպիտակ փողկապով, մոտակոտ, ճարպիկ և հնարագէտ առևտրականի գլխով, որ շարունակ անց ու դարձ է անում սենեակում՝ ձեռները կրծքին ծալած կամ յետեւը դրած. իսկ նստած ժամանակ ձախ ձեռքը սեղանին յենած, իսկ միւսը՝ սիւրտիւկի երկու կոճակների մէջ ամփոփած *)—նա մտածում է, անվերջ խոհերի ամպերով է պաշարուած: Ի՞նչ է նրա մտածութեան գլխաւոր առարկան: Նա համոզուած է, որ անմոռնի գանձերը դարձեալ իրան են սպասում, որ նորից ինքը պէտք է լինի երկրի տակի միլիոնների ազատարարը:

Այդ գեռ բաւական չէ. նա կատարելապէս համոզուած է, որ բացի իրանից ոչ ոք ընդունակ չէ բանկի ղեկավարութիւնը այնպէս օրինակելի և արդիւնաւէտ կերպով տանել՝ ինչպէս ինքն էր տանում: Այնպէս որ ամեն րոպէ սպասում էր, որ բանկից մի յատուկ պատգամաւորութիւն կը գայ անգուգական վերատեսչին նորից գործի գլուխ հրաւիրելու: Ով որ խփում էր դռան՝ նրան թւում էր թէ հէնց պատգամաւորներն են այնտեղ կանգնած, և նա մի կողմից խորիստ և ինքնավստահ շեշտով «մտէք» էր կանչում, իսկ միւս կողմից իր սիւրտուկը և փողկապն ուղղում՝ պատգամաւորութեանը վայելուչ կերպով հանդիպելու համար:

Առանձնութեան մէջ միակ անձնաւորութիւնը, միակ «բարեկամը», որ երբեմն այցելում էր Բօրկմանին՝ դա Վիլհէլմ Ֆօլգալն էր, մի գրագիր, մի հասարակ պաշտօնեայ. իսկ Ֆօլգալի մատաղահաս աղջիկը՝ Ֆրիդան նրան երբեմն երաժշտական բաւականութիւն էր պատճառում՝ դաշնամուրի նուագով: „Danse macabre“—մահերգ—ահա այն տխուր խորհրդանշանը, որի մէջ անփոփոխ էին Բօրկմանի երաժշտական յոյզերը և որի մեղմադճոտ հնչիւններն այնքան գրաւիչ էին դժբաղդ մեղանակեացի համար: Ֆօլգալի բաղդի անիւն էլ էր շեղուել, այնպէս որ երկու «բարեկամները» իրար շատ լաւ էին հասկանում: Բայց լոկ հասկանութիւնը, փոխադարձ շողորթութիւններ լսելու հաճոյքն էր այս «բարեկամութեան» աստաւը:

Ֆօլգալը երիտասարդ ժամանակ մի ողբերգութիւն էր գրել, որ ոչ գնահատուել և ոչ ներկայացման էր արժանացել:

*) Երբեք դերասանների համար ցուցումներ սովորաբար միշտ ինքն է տալիս և երբեմն ամենամանրամասն կերպով:

Միակ անձնաւորութիւնը, որ այսպէս թէ այնպէս գնահատութեան մի նշոյլ էր ցոյց տուել—Բօրկմանն էր: Ձե՛ որ վերջինս էլ ըստ արժանւոյն չէր գնահատուած: Ահա թէ նա ինչ է նշկատում իր բարեկամ Ֆօլշալին—«Մեզ միակ ընտրեալներին վրայ մի սոսկալի անէծք է ծանրանում. ամբողջ, ժողովուրդը, առհասարակ միջնաւայրը չէ հասկանում մեզ, Վիլհելմ: Եւ երբ Բօրկման ինքն իրան համեմատում է «առաջին արշաւանքում յաղթուած Նապօլէօնի» հետ—«Այդ զգացմունքը ինձ էլ է ծանօթ»—միամիտ ինքնալստահութեամբ վրայ է բերում Ֆօլշալը—«Այո, բայց մանրանկարով ի հարկէ»—նկատում է Բօրկմանը—«Իմ փոքրիկ ստեղծագործող աշխարհը ինձ համար մեծ նշանակութիւն ունի, Ջօն Գաբրիէլ»—պատառխախտում է Ֆօլշալը՝ դառնացած, բայց ինքնազուսպ շնչտով:

Պարզ է, որ այս տեսակ զոյգի բարեկամութիւնը անկարող էր երկարատեւ լինել: Դա կարող էր շարունակուել միայն մինչև այն աստիճան՝ քանի որ նրանք փոխադարձ հաւատք, վստահութիւն էին տածում դէպի միմեանց. կամ աւելի ճիշտ՝ քանի որ նրանք ընդունակ էին փոխադարձ ինքնախաբէութեամբ զբաղուել: Երբ Բօրկման ինքնավստահ կերպով գալիք «պատգամաւորութեան» մասին է խօսում—կամ երբ ոգևորուած իր ապագայ միսիայի մասին է ճառում—նոր հանքերի, նոր հորերերի, նոր ջրվեժների, բաժնետիրական ընկերութիւնների, մի խօսքով՝ առեօրական ամեն տեսակ խոշոր ձեռնարկութիւնների մասին—և Ֆօլշալը համարձակուում է իր կասկածը յայտնել, որ այս բոլորը հազիւ թէ չուտով տեղի ունենայ և որ առհասարակ Բօրկմանի ճակատագիրը դժուար թէ չուտով դէպի լաւ փոխուի—այն ժամանակ Բօրկման խորապէս վիրաւորուած, բայց և ցինիկաբար նկատում է.—«Մենք իզուր ենք միմեանց հետ ժամավաճառ լինում. աւելի լաւ է, այլ ևս չը գաս ինձ մօտ... Դու այլ ես ինձ հարկաւոր չես»:

Վերջին յարկից, նախկին վերատեսչի սենեակից այժմ անցնենք դէպի ներքին յարկը՝ տեսնենք այնտեղ ինչ է կատարւում: Էլլա Րէնթհայմ՝ Բօրկմանի խստասրտութեան ամենամեծ զօնը, որ երկար տարիներով հեռացել էր իր եղբոր և քրոջ մօտից—այժմ եկել էր այցելութեան, Ընտանեկան տխուր ճգնաժամի միջոցին նա ոչ միայն նրանց փրկել էր կատարեալ չքաւորութեան մատնուելու դժբաղդութիւնից, այլ և իր եղբոր որդուն՝ փոքրիկ Էրհարդին իր մօտն էր վերցրել՝ դաստիարակելու համար: Բայց մի քանի տարուց յետոյ Էրհարդը նորից վերադարձել էր դէպի իր ընտանեկան յարկը: Էլլան վստահաւոր և անբուժելի կերպով հիւանդ էր ու շատ կարճ ժամանակ

ունէր միայն ապրելու Նա մտադիր էր իր ամբողջ հարստութիւնը կտակել Էրհարդին. այս պատճառով եկել էր նրան որդեգրելու Բայց նախ քան Էրհարդին անցնելը՝ նա մեծ զարմանքով է տեղեկանում՝ թէ ինչպէս իր քոյրը ամենեւին չէ տեսնուում Բօրկմանի հետ Գունհիլդը մինչև անգամ իրան արդարացնում է—«Տեսնուել նրա հետ, դատապարտուածի, հինգ տարի բանտը նստածի հետ Այս տեսակ ճշող ամօթ, Բաւական է յիշել թէ ինչ էր առաջ Զօն Գարրիէլ Բօրկմանի առնունք... ոչ, ոչ, ոչ... ես անկարող եմ նրան տեսնել, Երբէք, երբէք, ոչ մի կերպ»:

Նա հաստատում է, որ իրանց կեանքը ամբողջ 8 տարի այդ ընթացքն է ունեցել, որ ինքը ներքեւի մենակեայն է, իսկ Բօրկմանը՝ վերեւի—«Բայց այդպիսի յարաբերութիւն ես երբէք չէի կարող թող տալ»—նկատում է Էլլան—«Իրողութիւնն այս է, որ երբէք չի կարող այլ եւս փոխուել»—պատասխանում է խտասիրտ Գունհիլդը—«Բայց դա սարսափելի մի կեանք է, Գունհիլդ»—«Աւելի քան սարսափելի, շուտով երեւի ես այլ եւս ոչք չեմ ունենայ դիմանալու»:

Երբ Էլլան կարեկցութեամբ նկատում է թէ՛ մի թէ չի կարելի ուրիշ կերպ վարուել—Գունհիլդը վեհանձնաբար պատասխանում է—«Նա (Բօրկման) երբէք այդ բանի համար ոչ մի քայլ չէ արել»—«Մի թէ ինքդ չէիր կարող առաջին քայլն անել»—զարմանքով շարունակում է Էլլան—«Ե՛ս, այս բոլոր չարիքից յետոյ, որ նա հասցրեց իմ գլխին Ո՛չ, չնորհակալ եմ Թող գայլը վերեւում շարունակէ անվերջ կերպով մոնչալ»—կտպիս գայլոյթով, ահա թէ ինչ է պատասխանում Գունհիլդը:

Այսպիսի մաքերով զեկավարուող մի կին սակայն երեւակայում էր իրան մի կարեւոր միսիայի համար կոչուած Նա յոյս ունէր հին փառքի քեկորներից նոր ծիլեր, նոր բողբոջներ պատրաստել, նա «վերականգնուելու» մասին էր մտածում: Իսկ ինչ գրաւական ունէր նա այս վերականգման գործի համար—իր միակ որդին Էրհարդը: Սա էր մաքրելու այն արատը, որ ծանրանում էր Բօրկմանի ընտանիքի վրայ: Էրհարդը մի «ասող» պիտի դառնար և իր փայլով պէտք է վանէր, փարատէր այն ստուերը, որ մութ տեսքով սփռուած էր իրանց ամբողջ ընտանիքի անդամների վրայ: Բայց այս տեսակ լուրջ պարտականութեան համար նա մտածել էր կամ ընդունակ էր արդեօք տալ իր որդուն և համապատասխան դատարարալութիւն: Իբրեւ մայր՝ նրա կատարած կրթական ամենախնոք դերը կայանում էր նրանում, որ նա աշխատում էր ամեն կերպ ներշնչել իր որդուն առեւտրական և զգուշաբի զգացմունք դէպի իր հայրը:

Մինչդեռ մօր դաստիարակչական հայեացքներն այսպէս օտարոտի էին, միւս կողմից հայրը միանգամայն անտարբեր էր և իր որդու հրեան անգամ չէր տեսնում: «Հիւանդ գայլը» իր դատարկ մնալիստութեան զոհ էր բերում նոյն-իսկ հայրական ամենատարրական պարտականութիւնը—«Եթէ մարդիկ ինձ հետ տեսնուել են ուզում՝ թող իրանք բարեհաճեն ինձ մօտ գալ. ես ոչ ոքի չեմ հրաւիրու»:

Թէ ինչ պէտք է լինէր այս տեսակ մթնոլորդի պտուղը—սա մենք չուտով կը տեսնենք:

Էրհարդին ամենից լաւը էլլան էր ճանաչում—«Միթէ կարծում ես, որ Էրհարդի նման մի երիտասարդ, այն տարիքում, որի մէջ նա գտնւում է... առողջ, կենսութախ... զոհ կը բերէ իրան ինչ որ «միսիայի» համար»։ Մեծամիտ և ինքնավստ տան մօրը համար քրոջ այս նկատողութիւնը շատ վիրաւորական էր. նա չէր կամենում, որ իր հաւատքը դէպի Էրհարդ ցնորամիտ համարուի—«Դու մտադիր ես ուրեմն ցցուել մեր երկուսիս մէջ, մօր և որդու մէջ»—սպասնական շնչով նկատում է Գունհիլդը—«Ես կամենում եմ ազատել նրան քո իշխանութիւնից, քո լծից, քո բռնակալութիւնից»։ «Դա այլ եւս քեզ չի յաջողուի։ Նա քո որդայթն էր ընկել... մինչև 15 տարեկան հասակը Բայց այնուհետեւ նա իմ տիրապետութեան տակն է»։ «Ես նորից կը խլեմ նրան քեզանից»։ Ես քեզ հետ միասին մի անգամ արգէն մտնուան և կեանքի կոխ եմ մղել մի մարդու համար»:

Էլլայի անհարկած այս մարդը Զօն Գարբիէլ Բօրկմանն է, որի անունով տեղի ունեցած մաքառումից Գունհիլդը զուրս եկաւ իրեն յաղթող Բայց և այնպէս անկասկած է, որ Էլլան աւելի էր սիրում Բօրկմանին. միւս կողմից՝ եթէ վերջինս առհասարակ ընդունակ էր որեւէ քնքոյզ զգացմունք տածելու դէպի մէկը—դա միմիայն Էլլան էր: Այն ինչ Գունհիլդը փառասիրական կրկնակի զգացմունքից զրդուած ձգտել էր դառնալ Բօրկմանի կինը—մի կողմից իր քրոջը յաղթելու, իսկ միւս կողմից «Զօն Գարբիէլի» կինը համարուելու համար:

Բայց ամենակծու հեղնութիւնը, ամենախիստ ապտակը Էրհարդ ինքն է հասցնում իր մօրը: Մինչդեռ վերջինս հպարտ ոճով խրախուսում է նրան—«Հաւաքիր ոյժերդ, Էրհարդ, ամբայի՛ր որդիս, մի մոռանար քո մեծ միսիան»։ «Ահա թէ ինչ է պատասխանում Էրհարդը—«Ա՛խ, մայրիկ... թե՛ղ այդ դատարկ խօսքերը, ես ոչ մի միսիայի համար պիտանի չեմ»։ Այնուհետեւ իր մօրը և մօրաքրոջը բարի գիշեր ասելով՝ շտապով հեռանում է: Վերելից danse macabre-ի—մեռելների պարի—յաւախենա-

կան հնչիւնները ծակում էին քսաներեքամեայ երիտասարդ ուսանողի ականջը։ Բայց նա հետուից, երեւակայութեամբ, երաժշտական աւելի ակորդների ձայներ էր լսում։ Անփորձ երիտասարդն ընկել էր մի կասկածելի, կոկետ և միանգամայն raffinnirte այրի տիկնոջ՝ Ֆանի Վիլտոնի ձեռքը, որին նա այդ նոյն երեկոյ հանդիպելու էր—երեւակայեցէք, հում մօտ՝ փաստաբան Ջինկէլի, որ իրանց ընտանեկան ողբալի դժբաղդութեան միակ պատճառն էր։ Սա արդէն Գունհիլդի դէմն ուղղուած հեղինակութեան ապօթեոյն է։ Ահա թէ ինչպէս է պատժւում մայրական յանցանքը։ Բայց սա դեռ վերջին պատիժը չէր։ Հետեւեալ օրը նա ուղղակի յայտնում է իր մօրը, որ այսուհետեւ «ինքն է իր կամքի տէրը», որ նա այլ եւս անկարող է տանել նրա լուծը, որ նա այլ եւս չի կարող դիմանալ իրանց տան «խեղդող մթնոլորտին», որ ինքը վերջապէս «երիտասարդ է և կամենում է ապրել իսկական կեանքով»։ Այս «իսկական կեանքին» աղբիւրը տիկին Վիլտոնն էր, որ նրան տանում էր դէպի Բապիլա։ Այս փորձուած և անզգամ կինը անա թէ ինչ է նկատում Գունհիլդին—«աղամարդիկ այնպէս փոփոխական են, տիկին Բօրկման, ինչպէս և մենք՝ կանայք»։ Երբ որ էրհարդը իր հաշիւները կը վերջացնէ ինձ հետ... և ես նրա հետ... այն ժամանակ երկուսիս համար էլ վատ չի լինի, եթէ մէկը մեզ հետ գտնուի իբրեւ պաշար»։ Իսկ այս «պաշարը» դժբաղդ Ֆօլգալի աղջիկն էր—Ֆրիդան, որ դեռ 15 տարեկան էր միայն։

Բարեւերտ Ելլան ամեն կերպ աշխատում է պահել էրհարդին, բայց իզուր։ Նա անդրդուելի էր իր վճռի մէջ, իսկ Գունհիլդը հիասթափութեան տազնապի մէջ՝ սկզբում չոր և խիստ կերպով նկատում է—«Ես ոչ ոքի չեմ պահի։ Թող ամենքն էլ հեռանան ինձանից—թէ մէկը և թէ միւսը—հւր կամենում են թող գնան՝ թէկուզ աշխարհի միւս ծայրը»—բայց անմիջապէս յետոյ դառն հեղեղանքով աղաղակում—«էրհարդ, մի գնա»։ Գունհիլդը մայր էր միմիայն այս վերջին խօսքերն արտասանելիս։ Բայց արդէն ուշ էր։

Տիկին Վիլտոնի փառահեղ սահնակը արծաթէ զանգակները հնչեցնելով՝ մուծ գիշերին երկու «որսերի» հետ միասին արագընթաց սահում էր ձեան չերտերի վրայով։ Եւ բազդի ինչպիսի հեղինակութիւն—այդ նոյն սահնակը գետին է զրորում ծերունի Ֆօլգալին, որ չը նայելով Բօրկմանի տղեղ վարձուքին՝ եկել էր նրան յայտնելու իր ուրախութիւնը։ Միամիտ ծերունու կարծիքով իր աղջկայ՝ Ֆրիդայի ճանապարհորդութիւնը տիկին Վիլտոնի հետ մի մեծ բարեբաղդութիւն էր։

Միայն էրհարդին որդեգրելու ցանկութիւնը չէր, որ էլ-

լային մղել էր դէպի Բօրկմանի տունը։ Նա այս վերջինի հետ շատ կարևոր հաշիւներ ունէր մաքրելու։

Բօրկման վաղուց չէր տեսել Էլլային, որի թուխ գիտակները նա երբեմն շոյում էր առանձին խաղաքանքով, իսկ այժմ նրա առաջ կանգնած էր տարիքաւոր մի կին՝ սպիտակ մազերով, տանջուած, բայց գեղեցկութեան հետքերը դեռ չը կորցրած դէմքով։ Գերեզմանի շէմքից ոչ հեռու՝ նա մի մարմնացած բողբ էր Բօրկմանի խոտափրատ և ամարդի վարմունքի դէմ։

— «Դու ամեն ինչ զոհնիր» — ասում է նա Բօրկմանին — «ինչ որ թանկագին էր քեզ համար — և քո սպազան... և քո կեանքը»։

Բայց Բօրկմանի համար «կեանքը միշտ ամենաթանկագին բանը չէ աշխարհում»։ Բօրկմանին թէ՛ն այժմ թուում էր թէ իր համար ամենաթանկագինը եղել է Էլլան — այնուամենայնիւ իրական ախուր փաստերն անհաշտ էին այս կարծիքի հետ. «ամենաթանկագին» կեանքը նոյնպէս փչրուած և խորտակուած էր՝ ինչպէս իր սեփական կեանքը։ Բօրկման մի մեծ ոճիր էր գործել այն կնոջ դէմ, որ պատրաստ էր իր հետ կրել «ամեն ինչ — և՛ ամօթը և՛ անանկութիւնը»։

Երկար քաղաքակութիւնից յետոյ՝ այժմ ոճրագործի առաջ կանգնած՝ արդար զայրոյթի շանթեր են, որ դուրս են դայտում Էլլայի բերանից — «Դու մարգասալան ես, դու գործելիք ամենամեծ մահադու մեղքը. դու սպանեցիր իմ մէջ կենդանի հոգին, որ ընդունակ էր սիրելու։ Հասկանո՞ւմ ես թէ դա ինչ է նշանակում։ Ա. Գրքի մէջ խօսւում է մի խորհրդաւոր մեղքի մասին, որի վերաբերմամբ դոյութիւն չունի և ոչ մի ներում։ Առաջ ես ամենին գաղափար չունէի թէ դա ինչ տեսակ մեղք է. այժմ եմ միայն հասկանում։ Ամենամեծ, անսիրելի մեղքը — դա մարդկային կենդանի հոգու սպանութիւնն է... Դու պատասխանատու ես կրկնակի սպանութեան համար — թէ քո և թէ իմ հոգու»։

Բօրկմանը Էլլայի սրտի այս աղիւղութիւնը փղծկայքը դռնում է շատ «բնական» և հասկանալի, որովհետեւ նա մի կին է, որի համար ուրիշ ոչինչ գոյութիւն չունի «բայի սրտի հաշիւներից»։ Բայց նա ուղում էր, որ Էլլան էլ իրան հասկանայ և չը մտածէ թէ ինքը «Շահի համար ծախել է իր ամենաթանկագին սեփականութիւնը աշխարհում»։ Բօրկմանի այս ցանկութեանը և նրան անմիջապէս հետևող պատճառաբանութիւնների մէջ արտայայտւում է դժբաղդ հերոսի բնաւորութեան ամենահետաքրքիր կողմը, որ և իր, անկեղծ ու անարուեստ շնչով կարծես մասամբ մեղմացնում է նրա չոր, անողոք խոտափրատութիւնը — «Ա՛խ, Էլլա, անյաւախ հետ կապուած գործողութիւնների շար-

ժառիթները յիշել այնքան հեշտ չէ։ Ազօտ կերպով այսքանն եմ միայն պատկերացնում, որ լռելեայն պատրաստելով իմ հսկայական ձեռնարկութիւնները՝ ես ինձ համարում էի կարծես մի օղազնայ, որ գիշերներն անքուն մնալով՝ լցնում է իր ահագին գունդը և պատրաստում ընկղմուել անյայտ և բազմաթիւ վտանգներով լի օղային ուղիներում... Ես կամենում էի իմ ձեռքն ամփոփել միւր երկրի իշխանութեան բոլոր ազբւրները, բոլոր հարստութիւնները, որոնցով վիտում են երկիրը և ժայռերը, ծովը և անտառները—ուզում էի ինձ հպատակեցնել, որպէս զի յետոյ դրանցով բազդուեորայնէի հաղարաւոր մարդկանց։

Այս խօսքերից յետոյ էլլան թէն դարձեալ սնյուղողդ է— Բօրկմանի դարձեալ համարում է «ոճրագործ, կենդանի և ուրախ զգայմունքներ սպանող» —այնուամենայնիւ նա տողընդմէջ հոյց է տալիս նաև կարեկցութեան ջերմ զգացմունք դէպի Բօրկման։ Որքան տարբերում է այս տեսակէտից Գունհիլդը, որի առաջ Բօրկման նոյնպէս բայ է անում իր սիրտը—«Իմ յանցանքը յայտնի է ամբողջ աշխարհին, բայց աշխարհը անտեղեակ է թէ ինչու ես այդպէս վարուեցի, թէ ինչու ես այդ յանցանքը պեճք ե գործէի։ Մարդիկ անբնութեակ են ըմբռնելու, որ ես ուրիշ կերպ չէի կարող վարուել, որովհետեւ ես էի այն, ինչ որ եմ—Ջոն Գարրիէլ Բօրկման... Ես ունէի իշխանութիւն իմ ձեռքի տակ, միւս կողմից այն ներքին, անյաղթելի մղումը... միլիոններ կուտակուած էին երկրի տակ, ժայռերի խորերում և ինձ էին կանչում, աղաչում էին ազատուելու համար, և ոչ ոք, բացի ինձանից, չէր լսում նրանց»։ Եւ երբ նա դեռ սթափուելու, նոր կեանքի արշալոյսի մասին էր մտածում—քարասիրտ կինը իսկոյն վրայ է բերում—«Այլ ես մի երազիւր կեանքի մասին։ Աւելի լաւ է հանգիստ կերպով մնաս զերեզմանութեմդ, ուր որ արդէն ընկած ես»։—«Գունհիլդ, Գունհիլդ, ինչպէս կարող ես»...—յուզուած կերպով ընդմիջում է էլլան։

Գունհիլդը իր ամուսնուն «մեռած» համարելով արդէն «յուշարձանի» պատրաստութիւնն էր տեսնում—մի յուշարձան որ ոչ քարից էր լինելու և ոչ մետաղից, այլ «կենդանի ծիլերից»։ Այս «կենդանի յուշարձանը» սակայն գնաց խաղաղական երկնքի տակ թառամելու։

Ութ տարուայ առանձնութիւնից և փախուած կեանքից յետոյ՝ ճիշտ այն գիշերը, երբ իր որդին ճանապարհ է ընկնում դէպի հարաւ—Բօրկման, առանց ուշադրութիւն դարձնելու ցուրտ նշանակի վրայ, դուրս է գալիս դէպի իր սիրած բնութեան դիրքը, որ մի տարօրինակ զուգադիպութեամբ ձեռն և

սառույցի շերտերով է ծածկուած՝ ինչպէս իր սիրտը։ Նրան ուղեկցում է հաւատարիմ էլլան։ Դժբաղդ մենակեացի բոպէները սակայն արդէն հաշուած են. նա դուրս է եկել այլ ևս յաւիտեան իր առանձնասննականի երեսը չը տեսնելու համար։ Ժայռերի գլխին կանգնած ցնորամիտ երիտաւրութեամբ նա այսպէս է զօտանցում— «Տեսնում եմ հեռու, ֆիօրդերի վրայ մեծ շոգնեակների ծուխը։ Ես տեսնում եմ. նրանք գնում և գալիս են աշխարհի զանազան ազգերը միմեանց հետ կապում։ Դրանք լոյս և տաքութիւն են տարածում հազարաւոր մարդկային սըրտերում։ Իմ նպատակն էր ահա այդ բանն ստեղծել, որ և մնաց երազ... Իսկ այստեղ, ներքեւ՝ գետի ափին, լսում եմ գործարանների աղմուկը, զղրդոցը։ Դրանք իմ գործարաններն են— այն բոլորը, ինչ որ ես ստեղծել էի ուզում։ Լսիր, ինչպիսի կենդանութեան մէջ եմ։ Գիշերային աշխատանքի ժամանակն է— այնտեղ գիշեր և ցերեկ աշխատում են։ Լսիր, լսիր անիւների պտոյտը, զլանների փայլը... Բայց այդ բոլորը դեռ իմ կառավարութեան արուարձաններն են... Ի հարկէ իմ կառավարութեան, այն կառավարութեանը, որին ես համարեալ թէ տիրապետելու վրայ էի, երբ ես մեռայ... Եւ ահա այդ բոլորն ընկած է անտէր և անօդնական, աւազակների յարձակումներին և կողոպուտներին ենթարկուած։ Էլլա, տեսնում ես հեռում այն լեռնաշղթաները, որոնք մէկը միւսի յետևից բարձրանում են աշտարակաձև— ահա իմ անվերջ, խոր և անսպառելի թագաւորութիւնը... Ես տեսնում եմ կուտակուած միլիոնները, զգում եմ հանքային երակները, որոնք զանազան ճիւղաւորութիւններով և հանգոյցներով ձեռները գէպի ինձ են մեկնում։ Ես տեսայ այդ բոլորը իբրև կենդանի օտուերներ՝ այն գիշերը... Երբ լապտերը ձեռքիս բանկի ներքնասննակումն էի (Բօրկմանը սրանով իր կատարած բանկի կողոպուտն է յիշում)։ Նրանք ազատութիւն էին խնդրում. և ես փորձեցի նրանց ազատել բայց չը կարողացայ. գանձը նորից անդունդն ընկղմուեց։ (Ձեռները բալկատարած) Բայց այս գիշերային լուսութեան մէջ ես կամենում եմ մրմնջալ ձեզ— սիրում եմ ձեզ, ով անդունդների և խաւարի մէջ թաղուած կենդանի գանձեր. սիրում եմ ձեզ կեանքի ծարաւով պապակուող նիւթեր, սիրում եմ ձեզ ձեր բոլոր չքեղութեամբ, ձեր փայլով և իշխանութեամբ։ Սիրում, սիրում, սիրում եմ ձեզ»։

— «Այո, այնտեղ՝ երկրի տակն էր միշտ քո սէրը, ուր և մնաց, Ջօն. իսկ այստեղ՝ երկրի վրայ մի ջերմ, կենդանի մարդկային սիրտ էր բարախում քեզ համար և դու փրցեցիր...»

Այդ տեսակ սպանութեամբ դու երբէք չես հասնի քո նը-

պատահին, ամենեւին յազթական կերպով մուտք չեն գործի քո գրտաշունչ և մտայլ թագաւորութեան մէջ՝ պատասխանում է էլլան:

Բայց Բօրկմանի շունչն արդէն մարելու վրայ էր—կաթուածի նշանները կամաց-կամաց երևում էին. — «Կարծես մէկը սառույցի ձեռներով ճնշեց իմ կուրծքը... հը... երկաթէ, և ոչ թէ սառույցի ձեռներով» — այս խօսքերից յետոյ նա անհնչալօծ վայր է ընկնում:

Գունճիլը ազախնի հետ վրայ հասնելով նկատում է.

— «Նա հանքահանի որդի էր... բանի վերատեսուչ, այդ պատճառով չը կարողայաւ դիմանալ այս թարմ օդին»:

— «Աւելի շուտ նրան ցուրտն սպանեց» — աւելացնում է էլլան:

— «Յուրաքանչյուրը նրան վաղուց էր սպանել»:

էլլան հաստատում է իր քրօջ այս խօսքերը աւելացնելով.

— «Եւ ինձ քեզ հետ ստուերի վերածել»:

— «Իրաւունք ունես»:

— «Մեռեալը և երկու ստուերներ—անհա թէ ինչ արաւ սառնութիւնը»:

— «Հոգեհան սառնութիւնը, եւ կարծեմ այժմ կարող ենք ձեռք մեկնել միմեանց, էլլա»:

— «Կարծեմ այժմ կարող ենք»:

Այսպիսով երկու քոյրերը իրանց «սիրածի» գիտի վրայ են միայն հաշտուում: Բայց այլ ևս ինչու համար՝ քանի որ նըրանք երկու «ստուերներ» էին միայն—որովհետեւ երկու կանանց մէջ այլ ևս ոչ մի կուտածաղիլ չը կար—Բօրկմանը գիտի էր դարձել, իսկ էրճարը բարոյապէս մեռել:

Բօրկմանի վերջին խոստովանութիւնները և ողբերգական վախճանը արդէն ցոյց են տալիս, որ նա լուի իր փառքի և ևսի համար չէր ձգտում գէպի առաջ: Թող պարագօքս չը թուի, եթէ նկատենք, որ նա էլ իր տեսակում նոյնպէս մի իդէալիստ էր և մինչև իսկ մի մոլեռանդ իդէալիստ: Նա սկզբից մինչև վերջ մի երեւակայող, ցնորամիտ երազող է, որ անողոք կեանքի բոլոր անախակալ հարուածների առաջ մնում է միանգամայն անդրդուելի: Իրականութեան ամենաճնշող բռունցքն անգամ անկարող եղաւ ցրուել նրա երազը— և նա մինչև իր վերջին շունչը երազում էր: Բայց ինչ էր նրա երազը, կամ ուրիշ խօսքով, ինչու՞ն էր կալանում նրա իդէալիզմը— իր «գիւտերով» և կարողութեամբ բախտաւորացնել ամբողջ մարդկութիւնը: Նա այնքան ինքնավստահ էր և իր ուժերով յափշտակուած, որ ի-

րան մի բաղադրիկ և ընտրեալ մարդ համարելով՝ կատարեալպէս համոզուած էր, որ միայն ինքն է կոչուած այդ մեծ միախաչի համար—միայն ինքը՝ Զօն Գաբրիէլ՝ Նա էր միայն լսում երկրի տակ կուտակուած միլիոնների գնդգնդոցը, հանքային բազմաթիւ որակներ պաղատանքի մրմունջներով միայն նրան էին մեկնում իրանց բազկատարած ձեռները։ Որ ինքն էր միայն ընտրուած սրանց պաղատանքը լսելու, այս անկենդան երակներին կեանք պարգեւելու, սա, իմիջի այլոց, որոշակի երեւում է հետեւեալ խօսքերից.—«Նա կը կամենայի իմանալ՝ եթէ ուրիշներ լինէին իմ տեղը՝ նոյն իշխանութիւնը ձեռներին՝ արգելօք ճիշտ այնպէս չէին վարուի, ինչպէս ես... Ո՛չ, և միմիայն նրա համար, որովհետեւ նրանց պակասում էր այն ոյժը, որով միայն ես ինքս եմ օժտուած։ Եթէ անգամ նրանք նոյնն անէին, ինչ որ ես՝ յամենայն դէպս ուրիշ զոգումներով կը ղեկավարուէին, քան թէ ես և այն ժամանակ գործը ինքն էլ ուրիշ կերպարանք կը ստանար»։

«Ուրիշ զոգումներ» խօսքը արդէն ցոյց է տալիս, որ Բօրկման իրան ազատ է համարում եսական հակումներից և նուիրուած միմիայն իր իգէալին։ Այն ինչ, եթէ ուրիշները նոյն յաջողութիւնը ունենային՝ դա կը դառնար միայն փառասիրութեան և ոչ թէ իգէալիզմի հետեւանք։ Այս Զեւր, անսպառ հաւատքն է գէպի իր իգէալը, որ նրան զարձնում է և իր սեփական դատաւորը—մի դատաւոր, որ անշուշտ պէտք է արդարացնէր ինքն իրան—«Բանտարկութեան տարիներում և այստեղ դահլիճում» առանձնութեան մէջ ես կրկին և կրկին քննում էի իմ գործը—ինքս անձամբ... Ես էի ինձ և՛ դատապարտող և՛ պաշտպանող, ես էի իմ դատաւորը—և համարձակում եմ աւել՝ աւելի անաչառ քան թէ ուրիշ որ և է մէկը... Քննում էի այնպէս անխնայ, այնպէս անողորմ կերպով՝ ինչպէս մի փատարան... Եւ ահա իմ խորհրդակցութիւնների մշտական հետեւանքը—եթէ ես մեղաւոր եմ՝ այն ժամանակ մեղաւոր եմ՝ միմիայն իմ առաջ»։

Ինքն իրան արդարացնելով հանդիւրձ՝ «անաչառ դատաւորը» այնուամենայնիւ մի բանում խիստ կերպով դատապարտում է իրան—դա մի անխնայ, ոչնչացնող ինքնադատապարտութիւն է.—«Նա այս ամբողջ 8 տարին իզուր անցկացրի—բանտարկութիւնից ազատուելուց անմիջապէս յետոյ ես պէտք է նուիրուէի իսկական կեանքին, անզրդուելի և ամեն տեսակ ցնորքից ազատ իրականութեանը... Ես պէտք է ամեն ինչ նորից սկսէի՝ նախկին բարձրութեանը հասնելու—նոյն իսկ աւելի

բարձր կանգնելու քան թէ առաջ՝ հակառակ այն բոլորին, ինչ որ տեղի էր ունեցել¹։

Այս իրականութեան մղումն է, որ նրան կէս գիշերին դուրս է բերում իր առանձնասենեակից։ Բայց իր ամենազառերազից յետոյ՝ երբ նա մի քանի ակնթարթ՝ սթափւում է՝ այդ նոյն իրականութեան բազուկը— «սառայցի»² և «երկաթի»³ իմաստալից խորհրդանշանով— ճմլում է նրա կուրծքը...

Մենք տեսնում ենք՝ թէ ինչպէս Իբսէն մի հին, վաղուց արժարժան թեմայի տալիս է նոր արտայայտութիւն— դա իր գէտալիզմի և կեանքի մէջ եղած յարաբերութիւնն է։ Այն իդէալիզմը, որի ծիւրեր կեանքի հոգի վրայ չեն ընկնում, մնում է անպտուղ, այն իդէալիզմը, որ իրական հորիզոնից դուրս է կազմակերպւում— ամպերի թազաւորութեան մէջ— դառնում է մի գնորդ, մի իլլուզիօն, Իբսէն իր բազմատեսակ հերոսներով հաստատել է այս ճշմարտութիւնը...

Միւս կողմից անկասկած է, որ Իբսէն չօչափում է հոգեբանական մի վերին աստիճանի հետաքրքիր և բարդ ինդիր— իդէալիզմի էութիւնը, նրա ներքին վերլուծումը և որ գլխաւորն է՝ իդէալի և իդէալիստի մէջ եղած յարաբերութիւնը։ Բացարձակ իդէալիզմը և անհատական կեանքը նա ուղղակի գէտուդէմ է դնում, և կարծես մէկը հերքում, բացառում է միւսը։ Չէ որ Բօրկման ինքն է խոստովանում թէ «կեանքը միշտ ամենաթանկագինը չէ»⁴։ Նրա համար ամենաթանկագինը իր իդէալն էր, որին նա զոհ բերեց իր կեանքը, և ոչ միայն իր սեփական կեանքը, այլ և շատերի՝ չը խնայելով նոյն-իսկ իր որդի սիրածին։

Խիստ, բացարձակ մտքով իդէալիզմը կարծես մի տեսակ ոչնչացում, ինքնաքայքայում է։ Եւ հետաքրքիրն այն է, որ Իբսէն իդէալիզմի այս քայքայող էութեանը ընդհանրապէս մի տեսակ քարայրնող սառնութեան արտայայտութիւն է տալիս— էլլան նկատում և Գունհիլդը հաստատում է, որ Բօրկմանի մահուն ուրախութիւնն «սառնութիւնն» էր։ Բրանդն էլ մարդկութիւնը դէպի իր աստուածային իդէալն առաջնորդելիս՝ միթէ նոյն զօրութեան և սառնութեան ներկայացուցիչը չէր, միթէ նա էլ չը զոհեց թէ իրան և թէ իր ընտանիքի բոլոր անդամներին։ Նոյն սառնութեան զոհերին մենք իսկոյն կը հանդիպենք նաեւ Իբսէնի վերջին դրամայում։

Սակայն հոգեբանական այս նուրբ վերլուծումով Իբսէն միթէ հանդիսանում է իրրեւ իդէալիզմի հակառակորդ։ Այսպէս մտածել կը նշանակէ Իբսէնի ոգին միանգամայն խեղաթիւրել։ Չը պէտք է մոռանալ, որ նա բացարձակ, կամ ուրիշ խօսքով՝

անառողջ, ցնորամիտ իդէալիզմ է, որ ներկայացնում է սառնութեան դրօշմով, եթէ այս փեսայ իդէալիզմը պահանջում է անպայման զոհաբերութիւն՝ պարզ է, որ առողջ իդէալիզմը, յամենայն դէպս, դարձեալ անմոտձելի է առանց զոհաբերութեան։ Սակայն տարբերութիւնը կայանում է նրանում, որ այս դէպքում զոհաբերութիւնն ունի իր սահմանը և որ գլխաւորն է՝ որակը։ Զոհաբերութիւնն այն ժամանակ է դառնում գնահատելի՝ երբ այս որակը անտես չէ անում և այդպիսով իր դրական հիմքը—իդէալիզմի մաքրութիւնը, վսեմութիւնը—բացասականի չէ վերածում։

Ուրեմն, ընդունելով հանդերձ, որ ամեն մի իդէալիզմ կապուած է զոհի գաղափարի հետ՝ միւս կողմից ցոյց տալով, որ զոհաբերութիւնն ունի և իր հիւանդոտ ու բացասական տեսակները—Իրսէն մթթէ մտադիր է առհասարակ զոհի գաղափարը, կամ ուրիշ խօսքով իդէալիզմը à tout prix հերքել—ամենեւին—կը պատասխանէր մենք։

XVIII

1899-ին լոյս տեսաւ Իրսէնի վերջին գրաման—„Երբ մենք մեռածներս սրափուեցինք“—Դրամայի ճակատին հեղինակը գրել է „գրամատիկական վերջաբան“, որ երկու կերպ կարելի է հասկանալ—կամ մի շարք գրամաների վերջաբան և կամ առհասարակ Իրսէնի գրամատիկական գրուածների վերջաբանը։ Սակայն ամենահաւանականը վերջինն է, որովհետեւ ծերութեան պատճառով—1898-ի մարտի 20-ին տօնուեց հանճարեղ գրամատուրգի ծննդեան 70-ամեայ յօրելեանը, որ մի ընդհանուր փառահեղ տօն էր Սկանդինավեան թերակղզու բոլոր ազգերի և առհասարակ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար—երեւի պատկանելի հեղինակը այլ եւս դադարել է գրելուց։

Իրրեւ „գրամատիկական վերջաբան“ Իրսէնի այս ստեղծագործութիւնն անշուշտ աւելի մեծ հետաքրքրութիւն պիտի շարժէր՝ քան թէ նրա որեւէ նախկին գրաման։ Մանաւանդ որ ընթերցողը կամ հանդիսականը մի ներքին մղումով կամենում էր տեսնել այս վերջին գրամայի մէջ Իրսէնի հանճարի ամենափայլուն արտադրութիւնը և նրա աշխարհայեացքի, փաստութեան և խորհրդածութիւնների գումարը։

Եթե անամնամայ ծերունին ինչքան էլ հանճարեղ լինէր, այնուամենայնիւ այս տարիքում անկարող էր, ի հարկէ, տալ մի արտասովոր, բոլոր նախկինները գերազանցող ստեղծագործութիւն։ Մենք կը տեսնենք, որ նա իր այս վերջին գրամայում

համարեա նոյն գլխաւոր պօրելներն է չօչափում, որոնք արծարծուած էին նրա նախազեկին և նախկին ուրիշ շատ դրամաներում—անհատականութեան, իսկական ամուսնութեան, իդէալի և կեանքի յարաբերութեան խնդիրները, Ամենահետաքրքիրն այն է, որ այս անգամ իբեհնը այս կարեւոր խնդիրները կապում է մի այնպիսի հերոսի հետ, որի ներքին աշխարհի նկարագիրը գուցէ որոշ չափով հէնց իր սեփական հոգու արտայայտման է—դա մի արուեստագէտ է, մի նշանաւոր քանդակագործ։ Այնպէս որ կեանքի և իդէալի մէջ իզամ յարաբերութեան փափուկ խնդիրը այս հերոսի վերաբերմամբ երեւան է գալիս իբրեւ կեանքի և գեղարուեստական իդէալիզմի յարաբերութեան խնդիր։

Ո՞ր իսկական արուեստագէտը միայն ապրելու, կեանքի հաճոյքը մինչեւ յատակը վայելելու մէջն է տեսել իր կոչումը, իր նպատակը։ Կան, ի հարկէ, quasi-արուեստագէտներ, որոնք զուրկ լինելով իրանց կոչմանը համապատասխանող իսկական շնորհքի՝ իրանց artiste լինելը ամեն կերպ աշխատում են bonvivant-ական ամենաբանալ հալումներով, անբարոյականութեան տղմի մէջ միայն որոնել։ Եւ պէտք է նկատել, որ հասարակաց կարծիքն էլ այս տեսակ „ականաւոր“, օրինալներ ի նկատի ունենալով՝ շատ անգամ մոլորուել է և մոլորում է՝ ենթադրելով, որ այդպէս էլ պէտք է լինի, որ արուեստագէտ ասածը ուրիշ կերպ անմտածելի է։ Յիրաւի՝ արուեստագէտ գաղափարը—լինի խօսքը բանաստեղծի, նկարչի, երաժիշտի թէ գերասանի մասին՝ դա միեւնոյնն է—ժողովրդի մեծագոյն մասը համարեա ամեն տեղ կապում է շարունակ տալիանուած բարքի և անբարոյականութեան հետ։

Այն արուեստագէտը, որ ընդունակ է եթէ ոչ լիովին, գոնէ աւելի ուժեղ կերպով իր արուեստով և ոչ թէ կեանքի անյողական հաճոյքներով յափշտակուել՝ նա է իսկական արուեստագէտը։ Ամեն մի բանական արարած՝ փողոցային չըջմոխիկից սկսած մինչեւ բարձրագոյն կրթութեան տէր ինտէլիգենտը՝ կեանքի մէջ ունի մի կենդրոնական նպատակ, մի յոյզ, մի կիրք։ Մէկի համար՝ գողութիւն, աւազակութիւնն է կիրքը, միւսի համար՝ անբարոյականութիւնը, երրորդի համար՝ թղթախաղը, չորրորդի համար՝ մտաւոր զբաղմունքը, Նապօլէօնի համար՝ աշխարհ տիրապետելը, Բրանդի համար իր աստուածային իդէալը, Բօրկմանի համար՝ երկրի տակից գանձեր հանելու ձգտումը և այլն։ Ահա իսկական արուեստագէտի կիրքն էլ իր սեփական արուեստն է։ Դա ոչ միայն նրա նիւթական, այլ ա-

ուսելապէս հոգեկան կեանքի ազդիւրն է *)։ Quasi-արուեստագէտը անունով է արուեստագէտ, որովհետեւ արուեստը նրա համար կիրք չէ, նրա յափշտակութեան և ոգեւորութիւնների կենդրոնակէտը չէ։

Որոշելով իսկական և quasi-արուեստագէտի մէջ եղած այս ընտրող տարբերութիւնը՝ այժմ դառնանք ղէպի խնդրի միւս կողմը, որի շուրջն էլ իսկապէս պտտում է Իւսէնի զրոմայի գլխաւոր հանգոյցը — չը նայելով, որ բուն արուեստագէտի համար ամենաուսուկ կիրքը իր, այսպէս ասած, գեղարուեստական կիրքն է՝ այնուամենայնիւ միթէ այս կիրքը միաժամանակ պէտք է լինի և նրա միակ կիրքը. միթէ նա բացառապէս իր արուեստով պէտք է ապրի՝ կեանքը, սէրը, ընտանեկան պարտականութիւնները և այլն պէտք է արհամարհէ։

Ահա այս հարցի պատասխանն է, որ մենք գտնում ենք, Իւսէնի վերջին զրոմայում Թէ այսպիսի հարցին նա ինչ տեսակ պատասխան կարող էր տալ՝ սա շատ պարզ է. դա նոյն պատասխանն է, որը մենք գտանք «Բրանդում» և որին հանդիպեցինք նաեւ Ջոն Գաբրիէլ Բօրկմանում։

Պրօֆէսոր Արնօլդ Բուբէկը մի նշանաւոր քանդակագործ է. նրա փառքը և հռչակը աւելի է մեծանում մի ստեղծագործութեամբ, որ նա խորհրդաւոր կերպով անուանում է «Յարութեան օրը»։ Բայց կարելի է ասել, որ նա իր այս հռչակը մասամբ պարտական էր մի կնոջ, մի հրաշագեղ կոյսի, որ պատրաստակամ կերպով իր ամբողջ մերկութեամբ նրան իրբեւ մօզէլ էր ծառայել իրինէն ոչ այնքան գեղարուեստաւէր հակումներից՝ որքան ղէպի Բուբէկն ունեցած վառվռուն, բայց ծածուկ սիրույ զրգուած՝ յանձն էր առել իր մարմինն ի ցոյց դնել նրա ստացի։

Բուբէկը արուեստագէտ է բառի բուն նշանակութեամբ. նա ամբողջովին իր ստեղծագործութեան իղէալով յափշտակուած՝ Իրենէի վրայ նայում է լոկ իրբեւ մօզէլի և այս պատճառով ամենեւին չէ շօշափում նրան։ Ուրիշ կերպ Իրենէն ինչպէս կարող էր դառնալ նրա համար «ամենաազնիւ, ամենամաքուր և ամենաիղէալական կնոջ» նախապատկերը։ Իսկ Իրենէն՝ երիտասարդ, գեղեցիկ, թարմ՝ իր զգացմունքների բոլոր ջերմութեամբ սիրում է Բուբէկի մէջ մարդուն, աւելի ճիշտ՝ տղամարդուն և ոչ թէ արուեստագէտին. իր սրտի խորերում նա

*) Սա չէ նշանակում, ի հարկէ, թէ իսկական արուեստագէտները առհասարակ հեռու են ուրիշ տեսակ հանդիպներ ունենելու ձգտումից։

գուցէ նոյն-իսկ ատում, արհամարհում էր Բուբէկի արուեստը։ Իրենէն կատաղում, զայրոյթից պատառ-պատառ է լինում, բայց ի զուր. Բուբէկի մաքովն անգամ չէ անցնում գծարդը կնոջ ներքին, հոգեկան փոթորիկը։ Հասնելով իր նպատակին՝ ստեղծելով մի հրաշակերտ, որ իր փառքի և անմահութեան կոթողն էր դառնալով՝ նա չնորհակալութեամբ, բայց միանգամայն անտարբեր կերպով արձակում է իրենէն՝ նրա հետ հանգիպելը և այս հանդիպման խոշոր հետեւանքը համարելով լոկ ուրիշ բազդաւոր միջադէպ։

Իրենէն դառնութեան և արդար զայրոյթի լեղին կրծքի տակն ամբարած՝ բաժանում է Բուբէկից, որին նա տուել էր ոչ միայն իր մարմինը, այլ և «իր հոգին»։ Սառն, անտարբեր արուեստագէտից կամովին յետ խլել իր հոգին նա անկարող էր, իսկ մարմինը շարունակ իր տրամագրութեան տակն էր։ Եւ վսյ այն նորափթիթ, մատաղ կոյսին, որի հոգին ուրիշին է պատկանում, իսկ մարմինը— ոչ, կարելի է ասել, որ այս տեսակ անբաղդ արարածի մարմինը ուղղակի դառնում է մի վտանգաւոր խայթոց, մի ոխերիմ թշնամի հէնց իր սեփական հոգու գէմ։ Որոշ տարիքում այս է կոնացի ընաւորութիւնների հիասթափութեան, վերաւորանքի և յուսահատութեան ընական հետեւանքը։ Իրենէն նոյն սեռի և արկածալից տարիքի ներկայացուցիչն էր՝ հետեւաբար նոյն ուղեգծով ընթանալու վտանգին մատուած։ Կատաղի զայրոյթից մի տեսակ ինքնամոռացութեան մէջ ընկած՝ նա անձնատուր է լինում կեանքի ալիքներին և զգայական հաճոյքների յորձանքումն է որոնում իր «միթիթարութիւնը»։ Այն մարմինը, որ մի գեղարուեստական հրաշակերտի պատկն էր կազմում՝ նա այժմ ի յոյց է, դնում զանազան Variété-ներում, որ Բուբէկի անմեղ աչքերի փոխարէն նրա վրայ են յառած հաղարաւոր մոլի և կրքոտ հայեացքներ։ Եւ դառնում է «մի մերկ արձան կենդանի պատկերների մէջ»։

Այս դեռ բաւական չէ. Բուբէկի վրէժը նա լուծում է այն բոլոր տղամարդկանցից, որոնց նա հանդիպում է իր կեանքի այս փոթորկալից տարիների ընթացքում։ Քանիս հետ նա վտանգաւոր, անխիղճ խաղեր է խաղում, քանիսին բազդաւորացնելու կեղծ, խարդախ ժպիտ ցոյց տալիս՝ գրաւում, յափըշտակում, բայց դէպի անբաղդութեան վիճն առաջնորդում. քանիսի մահուան և ինքնասպանութեան պատճառն է լինում։ Կատաղի ոճրագործը և ոչ մէկի մէջ խտրութիւն չէ դնում. նա չէ խնայում նոյն-իսկ իր երկու ամուսիններին, որոնցից առաջինը ամերիկացի մի բարձրաստիճան դիպլոմատ էր, իսկ երկ-

բորզը Ուրալում ոսկի հանքեր ունեցող մի հարուստ ուսու լահառական Մէլին նա խելագարեցնում, ինքնասպան է դարձնում, իսկ միւսին՝ իր «փոքրիկ, սրածայր դաշոյնով» սպանում։ Նա չէ հրաժարում գործ դնել նոյն-իսկ ամենալայրագ ոճիրը — որդեսպանութիւն։ Իր բոլոր զաւակներին նա մէկ միւսի յետեւից սպանում է՝ «ծնունդից առաջ կամ յետոյ»։

Այս սարսափելի ոճրագործութիւններից սթափուելիս՝ հասկանալի է թէ Իրենէն իւր պէտք է գտնէր իր փրկութիւնը — խելագարատան մի անկիւնում, որտեղ սակայն, ինչպէս յետոյ կը տեսնենք, նա անբուժելի կերպով չէ կաշկանդուում։

Այժմ տեսնենք թէ ինչ քնաւորութիւն ունեցաւ Բուբէկի ճակատագիրը՝ Իրենէից բաժանուելուց յետոյ։ Այս անգուղական մօղէից յետոյ Բուբէկի ստեղծագործող հանճարը նուազում է։ Նա այլ եւս անընդունակ է նախկին ոգեւորութեամբ ներշնչուել և ըստ այնմ արտադրել։ Իրենէն անդարձ կերպով տարել էր իր հետ մեծ քանդակագործի մուգան։ Այնուհետեւ նա մի քանի «անշան բիւստեր» է միայն պատրաստում, որոնք իրան ամենեւին չէին բաւականացնում։ Իր սեփական ստեղծագործութիւններն այնքան անարժէք, այնքան սննչան են երեւում իրան, որ նա կծու հեգնութեամբ ծաղրում, արհամարհում է այն սոգէտ ամբօխին, որ ոչխարային հակումներով կարող է յափշտակուել զբանցով և նոյն-իսկ «ճանրակշիռ ոսկով» փոխարինել։ Նա այդ բիւստերը չէ համարում իսկական բիւստեր, այլ զբանց յետեւը տեսնում է զանազան «կասկածելի և թաքուն» պատկերներ, որոնք անմատչելի են ամբօխի հայեացքին։ Ամբօխը բերանը բաց միայն ոգեւորուել գիտէ այդ բիւստերի «ապշնոող նմանութեամբ»։ Եւ գիտէք ինչն է այն ծածուկ և խորհրդաւոր երեւոյթը, որ միայն Բուբէկի աչքերին է մատչելի — «Ձիերի այլանդակ դէմքեր, սյնդազուխ էշերի քթեր, երկարաականջ և կարճաճակատ չների ու պարարտ խոզերի դրոխներ — պակաս չեն նաեւ ապուշ և վայրենի եղջերի դէմքեր» — մի խօսքով «ընտանի կենդանիների մի ժողովածու»։

Իրենէից բաժանուելուց յետոյ Բուբէկն ամուսնանում է մի կնոսուրախ, բայց գեղարուեստասիրական ոչ մի հակում ցոյց չը տուող կնոջ հետ — Մայեա, որի համար նա Տաունից լճի գեղածածաղ ափերում մի սիրուն վիլլա է կառուցանում։ Բուբէկը զգայական յափշտակութիւնների առաջին և վաղանցուկ շրջանից յետոյ է միայն նկատում այն անգունդը, որ դոյութիւն ունի Մայեայի և իր մէջ։ Նա մի ժամանակ խորհրդաւոր կերպով խոստացել էր իր կնոջ բարձրացնել մի անագին

Դեկտեմբեր, 1902.

լեռ՝ այնտեղից ցոյց տալու «աշխարհի ամբողջ փառահեղութիւնը»։ Բայց նա չուտով համոզուեց, որ Մայեան «անընդունակ է լեռ բարձրանալ», որ նա «հովիտներին» կին է և ոչ թէ բարձրութիւնների։ Իսկ երբ Մայեան յիշեցնում է նրան այս մասին՝ Ռուբէկն ուղղակի խոստովանում է թէ դա մի ֆրազ էր, որ նա սիրում էր ղեռ զարդակաւ տարիներէից յաճախ գործածել։ Բայց Ռուբէկը կեղծում է. նա այս խոստումը համոզուած կերպով էր արել՝ միայն չուտով հիասթափուել, տեսել, որ Մայեան ոչ իր արուեստով ոգեւորուել գիտէ և ոչ կարող է առհասարակ իրան հոգեպէս բաւականացնող մի կին դառնալ։

Մայեան նոյնպէս ատում է Ռուբէկի արուեստը—միայն այն տարբերութեամբ, որ Իրենէն հասկանալով՝ առհասարակ գեղարուեստի էութիւնը, ոգին ըմբռնելով էր ատում, այն ինչ Մայեան՝ առանց որևէ հասկացողութեան։ Նա ամենանպաստաւոր դէպքում իր ամուսնու փառքով միայն կարող էր ոգեւորուել և ոչ թէ այս փառքի իսկական յիշատակարաններով։ Ռուբէկը իր կնոջ հետ անցկայրած հինգ տաղտկալի տարիներումն է վերջապէս համոզուում, որ իր «գեղարուեստական երազները» մրափում են միայն Իրենէի սրտում, որ իր ստեղծագործական ներշնչումների կախարդական բանալին Իրենէի ձեռքումն է և ոչ թէ Մարեայի։

Այս հանգամանքներում Իրենէն և Ռուբէկը հարաւային նորվեգիայի ծովեզերեայ ամառանոցներից մէկում անակնկալ կերպով հանդիպում են միմեանց—սրանով էլ համարեա սկըսում է դրաման. այնպէս որ գլխաւոր հերոսի և հերոսուհու կեանքի վերոյիշեալ դէպքերը վարագոյրի յետեւն են տեղի ունենում։

Ընկճուած, մեղամաղձոտ, հիասթափութեան ենթարկուած Ռուբէկը նախ քան ծովային մի մեծ ճանապարհորդութեան սկսելը՝ Մայեայի հետ առժամանակ հանգստանում էր ամառանոցում։ Անքուն գիշերներից մէկում, նա իր սենեակի պատուհանի հանդիպակաց ծառերի տակ, նկատում է մի սպիտակազգեստ կին թափառելիս. սրան անմիջապէս կից որոշում է մի ուրիշ կերպարանը՝ «բոլորովին մութ» ինչպէս մի ստուեր։ Երբ առաւօտեան Ռուբէկը պատմում է Մարեային իր տեսածը՝ վերջինս կարծում է թէ նա երազած պէտք է լինի։ Սակայն Ռուբէկը իր սեփական աչքերով տեսածին աւելի էր հաւատում, քան թէ իր կնոջ մեկնութեանը—այնպէս որ վերոյիշեալ գիշերային կերպարանների մասին հիւրանոցատիրոջից է բացատրութիւն խնդրում։ Վերջինս սկզբում անտեղեակ և մի քանի րոպէից յետոյ միայն ուշքի եկած՝ հազիւ էր սկսել Ռուբէկին

բայատրութիւններ տալ—երբ յանկարծ հեռուից նկատում է մի նիհար, բարձրահասակ արկնոջ և նրա հետ մի սարկաւազուհու՝ արծաթէ խաչը կրծքին։ Տիկնոջ երեսը դժգոյն է և դալուկ, դիմագծերը անշարժ և անկենդան։ աչքերը դէպի գետին խոնարհած և ըստ երեւոյթին կարծես առանց տեսողութեան։ քայլերը յամր և դանդաղ։ Առանց իր շուրջը որեւէ հայեացք ձգելու՝ նա իր ուղեկցի հետ մտնում է հիւրանոցի պալիւրնոն։ Բուրեկն ակամայ դէպի Պալիւրնոնի դուռն ուղղուած՝ նեարդային հետաքրքրաշարժութեամբ հարցնում է—*«նով էր այս տիկինը»*։—*«Մի օտարուհի»*—պատասխանում է հիւրանոցատէրը։ Նա յայտնում է նոյն-իսկ արկնոջ անունը—*madame de Satow*։ Մայեան նկատելով իր ամուսնու տարօրինակ հետաքրքրութիւնը՝ հարցնում է—*«չը լինի այս տիկինը քեզ երբ և իցէ մօդէլ է ծառայել»*։—*«Մօդէլ»*—ապշած կրկնում է Բուրեկ—*«նչ, իմ փոքրիկ Մայեա, նա իսկապէս միայն մի հատիկ մօդէլ եմ ունեցել»*։ մի հատ իմ բոլոր ստեղծագործութիւնների համար»։

Այդ միջոցին հեռուից գալիս է կալուածատէր Ուլֆհայմը՝ *«արջասպանը»*՝ շրջապատուած իր ամենասիրելի բարեկամներով—չներով։ Հիւրանոցատէրը ամեն կերպ աշխատում էր խուսափել նրան հանդիպելուց, որովհետև շատ անախորժ էր նրա հետ խօսել, մանաւանդ *«կանանց ներկայութեամբ»*—բայց արդէն ուշ էր։

Ինչպէս *madame de Satow* մի րոպէ առաջ զրաւել էր Բուրեկի ուշադրութիւնը՝ այնպէս էլ այժմ այս տարօրինակ որսորդն է դարձել Մայեայի հետաքրքրութեան առարկան—*«Դուք ճիշտ արջերի որսորդ էք»*—հարցնում է նա Ուլֆհայմին։—*«Ամենամեծ հաճոյքով արջերի յետիւցն եմ ընկնում»*։ բայց ինձ ախորժելի են առհասարակ ամեն տեսակի գազաններ, որոնք կը հանդիպեն գնդակիս—արծիւներ, գայլեր, կանաչք, եղնիկներ թէ եղջերուներ—բոլորը մէկ է—միայն թէ պէտք է թարմ, հիւթալից և արիւնառատ լինեն»։

Նրանք շուտով են բարեկամանում։ Ուլֆհայմը յայտնում է թէ մտադիր է շուտով լիւր բարձրանալ որսի և առաջարկում է Մայեայի ընկերակցութիւնը։ Իսկ նախ քան այդ՝ նա գնում է իր նոր բարեկամի բարեկամների—չների—կերակրուելը տեսնելու։

Այս բաղդաւոր զոյգի հեռանալուց անմիջապէս յետոյ ներս է մտնում տիկին *de Satow*՝ սարկաւազուհու պատրաստած նախաճաշը վայելելու։ Կաթի բաժակը հաղիւ շրթունքներին մօտեցրած՝ նա յանկարծ կանգ է առնում։ անկենդան և արտայայտութիւնից զուրկ հայեացքով նա Բուրեկին է նայում։

— «Ես քեզ ճանաչում եմ, Իրենէ՛— նկատում է ապշած Բու-
բէկը։— «Դու իմացար ես ով եմ, Արնօղ՞»— հարցնում է Իրե-
նէն կիսակենդան ձայնով։

Իրենէն խելագարատանը կաղզուրուելով՝ դուրս էր եկել
և ապրում էր մի հիւանդապահ սարկաւազուհու հսկողութեամբ։
Նա այժմ իր երկրորդ ամուսնու անունով— ուռու վաճառականի՝
կոչւում էր տիկին de Satow. Նա զարմանում է, որ Բուբէկը
դեռ «կենդանի» է և նոյն-իսկ ամուսնացել մէկի հետ, որին
ձեռք է բերել իր (Իրենէի) «մահուանից յետոյ»։

«Իսկ զաւակը», հարցնում է Իրենէն, նա էլ ի հարկէ
լաւ է։ Մեր զաւակը ինձանից երկար է ապրում՝ փառքի և
պատուի մէջ։ Բուբէկը անյեալի յիշողութիւնները պատկե-
րացնելով հասկանում է «մեր զաւակ» արտայայտութիւնը—
Իրենէն նրա մեծ ստեղծարարութեան մասին էր ակնարկում,
որին ինքը իբրեւ մօդէլ էր ծառայել, իր կենդանութեան ժա-
մանակ։

— «Այո, այո, Իրենէ, այժմ «մեր զաւակը» ամբողջ աշխար-
հում հռչակուած է։ Դու անշուշտ այդ մասին կարդացած կը
լինես— չէ՞»։

— «Եւ իր հօրն էլ հռչակաւոր դարձրեց— այս էր քո ե-
րազը»— զսոսայած չեշտով վրայ է բերում Իրենէն։

— «Այս բոլորը միայն քեզ եմ պարտական, Իրենէ, բոլորը։
Շնորհակալ եմ»։

— «Եթէ ես այն ժամանակ իմ արդարացի իրաւունքը
գործ դնէի, Արնօղ— այդ զաւակին պէտք է սպանէի... սպա-
նէի քեզանից բաժանուելուցս ստաջ, քայքայէի, ավերէի, փո-
շինբերի վերածէի»։

— «Այդ դու չէիր կարողանայ, Իրենէ. դու այդ սիրտը
չունէիր»։

— «Ոչ, ես այն ժամանակ այդ սիրտը չունէի... Բայց այ-
նուհետեւ ես բազմաթիւ սպանութիւններ եմ գործել՝ թէ լոյս
արեւով և թէ գիշերային խաւարով։ Սպանել եմ ատելութեան,
վրէժի և տանջանքի մէջ»։

— «... Գուցէ դու մի ուրիշի վրայ սիրահարուած էիր»։

— «Միայն մեկի վրայ, որին սակայն ավելորդ էր իմ սէրը
և որը այլ եւս պէտք չունէր իմ կեանքին»։

Այնուհետեւ Իրենէն վշտագին կերպով պատմում է իր
մրրկածուի կեանքի արկածները։ Եւ Բուբէկը «մի խոր միտք է
տեսնում» այն բոլորի մէջ, ինչ որ պատմում է նա։

— «... Իւրաքանչիւր խօսքը, որ դուրս է գալիս իմ բերա-

նից՝ կարծես մըմնջում են իմ ականջին՝—այսպէս է խոստովանում Իրենէն:

—«Քո սրտում լարեր են կտրուած, Իրենէն»:

—«Միշտ այդպէս է լինում՝ երբ մեռնում է մի երիտասարդ, տաքարիւն կլին»:

—«Բայց, Իրենէն, ազատի՛ր քեզ այդ խառնակ մտապատկերներից: Դու ապրում ես, ապրում, ապրում»:

—«Ես մեռած էի՝ տարիներ շարունակ, եկան և շղթայեցին ինձ, ձեռներս մէջքիս կապեցին և յետոյ ինձ գերեզման իջեցրին, որ վանդալուած էր երկաթէ ձողերով և ունէր պատտառածակ պատեր—այնպէս որ վերեւը՝ երկրի վրայ ոչ ոք չէր լսում թաղուածի աղաղակը: Այժմ ահա սկսում եմ հետզհետէ մեռեալներից յարութիւն առնել»:

Յետոյ նա պարզապէս յայտնում է, որ իր մահուան պատճառը Բուբէկն էր, որին սակայն նա պատրաստ էր մինչև իր կեանքի վերջը հետեւել՝ ծառայել, պիտանի լինել նրան ամեն հանգամանքներում—ճիշտ նոյն պատրաստակամութիւնը էլլան էր ցոյց տալիս Բօրկմանի վերաբերմամբ:

—«Ազատ, քօղազուրկ մերկութեամբ... ես ինձ ի ցոյց դրել քո առջ... և դու ոչ մի անգամ չը շօշափեցիր ինձ»:

—«Իրենէն, գիտես, որ երբեմն ուղղակի խելագարում էի քո գեղեցկութիւնից»:

—«Բայց և այնպէս եթէ դու ինձ շօշափէիր՝ քեզ անշուշտ տեղն ու տեղը կը սպանէի: Ես մի սուր ասեղ ունէի ինձ մօտ՝ մաղերումս պահած...»:

—«Ես արուեստագէտ էի, Իրենէն... Եւ «Յարութիւնը» պէտք է մարմնանար մի երիտասարդ կնոջ պատկերով, որ նոր էր ստափուում մահուան քնից... Եթէ ես զգայական ցանկութեամբ քեզ վրայ նայէի՝ այն ժամանակ իմ մտքերը կը սրբապղծէին և ես չէի կարող լիովին ստեղծագործել այն, ինչ որ կարօտագին տենչանքով ստեղծել էի ուզում:—Եւ ես մինչև այժմ էլ հաւատացած եմ, որ մի ճշմարտութիւն կայ դրա մէջ»:

—«Առաջ գեղարուեստական երկը՝ և յետոյ մարդկային զաւակը»:

—«Դու ինձ համար մօդէլ չէիր, այլ իմ ստեղծագործութեան սկզբնական աղբիւրը: Դու տուիր ինձ քո ամբողջ մերկ գեղեցկութիւնը»:

—«... Քո և քո զաւակի փառքի համար»:

—«Նոյնպէս և քո փառքի, Իրենէն»:

—«Բայց ամենաթանկագին ընծան դու մոռացար: Ես

նուիրեցի քեզ իմ մատաղ, կենդանի հոգին և մնացի դատարկ կրծքով՝ առանց հոգու և այդ պատճառով էլ մեռայ, Արնօղդ՝

Այն միջոցին, երբ Իրենէն Բուբէկի առաջ իր սրտի դառն կսկիծն էր արտայայտում՝ Մայեան իր նոր բարեկամի հետ իրան շատ երջանիկ էր զգում։ Նա թախանձանքով խնդրել էր իր ամուսնուց թոյլ տալ այն «զարհուրելի արջասպանի» հետ լեռը բարձրանալով— «Չես կարող երեւակայել, թէ նա ինչ հրաշալի բաներ է պատմում լեռների մասին, այնտեղ տիրող կեանքի մասին, տգեղ, սարսափելի, անհաւատալու չափ զարշելի են նրա պատմած ստախոսութիւնները—համարեա թէ ես հաւատում եմ, որ դա պէտք է սուտ լինի։ Չը նայելով այս բոլորին՝ չափազանց գրաւիչ, գայթակղեցնող»։

Լեռնային զրօսանքից ուրախութեան աղաղակներով յետ դալիս՝ Մայեան առանձին գոհունակութեամբ պատմում է իր ամուսնուն, որ Ուլֆհայմը «ամենեւին արուեստագէտ չէ»։ Բայց նա աւելի է առաջ գնում— «Դու ընկերութեան մարդ չես՝ Բուբէկ, Դու ամենամեծ հաճուքով քո սեփական ճանապարհովն ես գնում և քո սեփական շահերովն զբաղում։ Իսկ ես միանգամ ընդմիջաւ անկարող եմ էմ գործերի մասին կարգին խօսել քեզ հետ—այս գեղարուեստական հարցերի մասին և այլն։ Եւ Աստուած վկայ՝ դա ինձ ամենեւին չէ հետաքրքրում»։

Վերջապէս Բուբէկը կարեւոր է համարում, երկարատեւ լռութիւնից յետոյ, գէթ մի անգամ իր կեանքում բացատրուել իր կնոջ հետ— «Այն, որ ինձ համար այժմ շատ զգալի է և ցաւալի—դա մի այնպիսի մարդու պակասութիւն է, որ ներքուստ ինձ իսկապէս մօտիկ լինէր»։

— «Միթէ ես այդպէս չեմ, Բուբէկ»։

— Դու ինձ սխալ ես հասկանում։ Ես պէտք է ապրէի այնպիսի մէկի հետ, որ ինձ ուղղակի լրացնէր, ինձ հետ մի լինէր՝ իմ ամբողջ կեանքի և ստեղծագործութիւնների մէջ»։

— «Այո, այդպիսի բարձր պահանջների ես, ի հարկէ, չէի կարող բաւականութիւն տալ»։

— «... Ուրեմն դու ինձ հարկադրուած առար՝ իբրեւ փոխարինող մի միջոց»։

— «Եթէ անկեղծ խոստովանեմ, համարեա թէ այդպէս էր...»։

Բայց Բուբէկը ուրիշ յայտնութիւններ էլ է անում։ Նա չէ կարող թազցնել այն ձանձրոյթը, որ այժմ զգում է իր կոչումից՝ գեղարուեստական գործունէութիւնից— «Այդ բոլորը ինձ այժմ դատարկ, անբովանդակ և ոչինչ է երեւում»։

— «Դրա փոխարէն ինչ կը կամենայիր» — հարցնում է Մայեան։

— «Կեանք, Մայեան»։

Բուբէկն ապրել էր կամենում. բայց Մայեան միթէ կարող էր նրան կեանք տալ։ Բուբէկի կեանքի և երջանկութեան բանալին Իրենէի ձեռքն էր — «Օգնիր ինձ, որ ես մի անգամ էլ կարողանամ ապրել» — պաղատում է նա Իրենէին։ «Դատարկ երազներ, ունայն, մեռած երազներ։ Մեք կենակցութիւնից այլ եւս ոչ մի յարութիւն չի կարող առաջ գալ» — յուսահատական շեշտով պատասխանում է Իրենէն։ Վերջինիս համար մի բան միանգամայն հաստատ էր — «Այն, ինչ որ անդառնալի կերպով կորած է՝ կը տեսնենք միայն այն ժամանակ՝ երբ մենք մեռածներս կը սթափուենք»։

Իսկ ինչ էր այս «սթափուած մեռեալների» տեսածը — «որ մեք երբեք չենք ապրել»։ Բայց յուսահատութեան խաւարի մէջ միթէ չը կար լոյսի մի աննշան ճառագայթ, մեռելածին երազը միթէ մի քանի ակնթարթ գոնէ չը պիտի իրականանար։ Եւ ահա Իրենէն նոր, ոգեշունչ կեանքի յոյսով յանկարծ վերակենդանացած՝ դառնում է դէպի Բուբէկը — «Կամենում ես ինձ հետ մի ամառային գիշեր անցկացնել՝ վերելք, լեռնային բարձունքներում»։ Բուբէկը ցնծութեան աղաղակներով «այո՛» է պատասխանում։ Նրանք վճռում են «նախ քան նորից իրանց գեղեզմաններ վերադառնալը՝ կեանքի վախճանում գէթ մի անգամ ճաշակել կեանքը»։

Բայց չէ որ Մայեան էլ էր ուզում «ապրել ։ Նա էլ իր «լրացուցիչ կէսն» էր դտել։ Բուբէկը՝ առանց որեւէ դժուարութեան, ընդհակառակն մեծ բաւականութեամբ թոյլ է տալիս նրան Ուլֆհայմի հետ «որսի» գնալ։ Մայեայի ուրախութիւնն անսահման է — «Ես ազատեմ, ես ազատեմ, ես ազատեմ. բանտարկութեան ժամը անցաւ. ես ազատեմ ինչպէս մի թրուչուն — ես ազատեմ»։ Եւ նա խոստանում է իր ամուսնուն լեռներից մի «գիշատիչ թռչուն» բերել։

Արշալոյսին՝ երկու զոյգը տարօրինակ պատահականութեամբ լեռների ձիւնածածկ բարձրութիւնների վրայ հանդիպում են միմեանց։ Չը նայելով Ուլֆհայմի խորհրդաւոր նախազգուշութիւններին՝ Բուբէկ և Իրենէն շարունակում են իրանց ճանապարհը դէպի լեռների անմատչելի կատարները, իսկ Ուլֆհայմը և Մայեան իջնում են դէպի ստորոտը։ Եւ ահա յանկարծ լսում է մի որոտազին աղմուկ։ Մի հսկայական ձեռք հիւս գլորում է սոսկալի արագութեամբ դէպի հովիտը և իր թանձր չերտերի տակ թաղում Իրենէին և Բուբէկին։

Սարկաւազունին՝ Իրենէի «ստուերը» բազկատարած ձեռներով աղաղակում է և ապա բոպէական լուծիւնից յետոյ՝ օդում խաչակնքում և արտասանում—«Pax vobiseum»—խաղաղութիւն ընդ ձեզ»:

Այս «վհուկը»—ինչպէս անուանում էր Իրենէն իր մշտական հսկողին—բարեպաշտութեան խորհրդանշանն էր, կեանքի թշնամին, որ դժբաղդ հանգուցեալներին խաղաղութիւն էր ցանկանում:

Այս էր «սթափուած մեռեալներին» ճակատագիրը—անցեալ կեանքի մահաշունչ ստուերը փարատելուց յետոյ՝ յաւիտենական քնի մէջ միայն միանալու ինչու—որովհետեւ նրանք երկրի վրայ գերերկրային երջանկութիւն էին որոնում—երջանկութիւն լինոյալին բարձունքներում: Բաղդի մի հեզնական զուգադիպութեամբ՝ միւս զոյգը երկրային սովորական երջանկութիւն էր վնասում՝ առանց «բարձունքների ցաւով տառապելու—և երջանկացաւ Բայց Իրենէի և Բուբէկի այս տեսակ վախճանը ունէր և մի ուրիշ հիմք: Նրանք թէեւ սթափուել էին, բայց արդէն ուշ էր—իբրեւ գերեզմանից նոր դուրս եկած մարդիկ՝ նրանց մէջ ապրելու ձգտումը աւելի ուժեղ էր, քան թէ ապրելու կարողութիւնը: Իրենէն թէեւ սթափուած, այնուամենայնիւ նոյն կիսամեռ արարածն էր, քայքայուած, տալիս ու վրայ եղած նեարդերով, նոր գերեզմանի շէմքից ոչ հեռու Բուբէկը թէեւ լի կեանքի եռուն տենչանքով, բայց իր մեռած լինելու գիտակցութեամբ դեռ նոր պաշարուած՝ զղջման զգացմունքովն էր տառապում և անկարող էր սրա հետ կապուած մեկամաղձոտ յոյզերի տիրապետութիւնից ազատուել ու երբ և իցէ երջանկանալու, Իրենէն ինքնասպանութիւն էր գործել, իսկ Բուբէկը և՛ սպանութիւն և՛ ինքնասպանութիւն—«Ես էլ մի մարդ էի»—այսպէս ազիոզորմ կերպով դանգաւում է Իրենէն—«Եւ ես էլ ունէի մի կեանք ապրելու համար... ես պէտք է գաւակներ ծնէի, շատ գաւակներ, իսկական զաւակներ—և ոչ թէ այնպիսին, որին գերեզմաններումն են պահում—այս էր իմ կոչումը: Ես երբեք քեզ չը պէտք է ծառայէի, ով բանաստեղծ»:

Իրենէն գիտակցաբար է գործածում «բանաստեղծ» խօսքը. նա որքան անխնայ է իր դատապարտութեան մէջ՝ այնուամենայնիւ խորապէս զգում է, որ Բուբէկի յանցանքը բաւական մեղմանում է, որովհետեւ նա բանաստեղծ է:

Ուրեմն ինչ, բանաստեղծ-արուեստագէտը պէտք է իր գեղարուեստական իղէալը զոհէր մի գեղեցիկ կնոջ, որ քոշազուրկ մերկութեամբ իր առաջն էր կանգնած և որը պատրաստ էր լիովին անձնատուր լինել նրան. նա պէտք է յարութեան

գաղափարը սրբապղծէր և իր ստեղծագործական թռիչքների թափը ջլատէր: Եթէ խորը քննելու լինենք՝ կը տեսնենք, որ Իբսէն խնդիրն այսպիսի երկայնաբանութեամբ չէ դնում: Իրենէն բողոքը—որ Բուբէկը իրան իբրեւ մօդէլ ծառայեցնելիս ամենաինչը շօշափեց—խմատը միայն թեթեւ, մակերեսով թական կերպով ըմբռնելիս՝ կարելի է գալ այն բանալ եզրակացութեան թէ՛ Իբսէնը հակուած է պնդելու, որ Բուբէկը իր գեղարուեստական իդէալը պէտք է մի կողմ դնէր և միայն իր զգայական հաճոյքի մասին մտածէր *): Այս եզրակացութեան անմիտ և սխալ լինելու ամենափայլուն ապացոյցը Իրենէի հետեւալ խօսքերն են—«Պայնուամենայնիւ եթէ դու ինձ շօշափէիր ևս քեզ տեղն ու տեղը կը սպանէի»:

Մենք տեսնում ենք, որ Իբսէնին հետաքրքրողը զուտ զգայական հաճոյքի պօրբեմը չէ, այլ բոլորովին մի այլ խնդիր—իդէալիզմի քարայցնող սառնութիւնը, որին մենք հանդիպեցինք Բօրկմանի և դրանից առաջ՝ Բրանդի մօտ: Ամբողջովին իր գեղարուեստական իդէալով յափշտակուած՝ Բուբէկ սառն անտարբերութեամբ է վերաբերում դէպի այն կինը, որի գեղեցկութիւնները իրան երբեմն յուզողի խելագարացնում էր: Բուբէկին շատ լաւ յայտնի էր, թէ Իրենէն ինչպիսի գնով էր իբրեւ մօդէլ ներկայացնում—նա թողել էր իր ծնողներին, ընդհանուր բամբասանքի առարկայ էր դարձել և յանձն էր առել առհասարակ ամեն տեսակ զրկանք: Եւ ահա այս տեսակ մարմնացած մի զոհ շահագործելուց յետոյ՝ Բուբէկը, առանց ջերմութեան մի նշոյլի, նրա հետ հանդիպելը համարում է լոկ յմի բարեբաղդ միջադէպ:

Այն, ջերմութիւն—ահա թէ ինչ էր պակասում Բուբէկին, իր ստեղծագործութեան հետ կապուած փառքի երազներով ընդարմացած, վաստակելիք կանաչ դափնիներով շլացած՝ նա շատ ուշ միայն գիտակցեց թէ իր աններելի անտարբերութեամբ ինչպիսի թանկագին գանձ էր կորցրել: Այդ դեռ բա-

*) Մի քանի քննադատներ Բուբէկի անձնատրութեան մէջ տեսնում են հէնց իրան՝ Իբսէնին, որ մեր կարծիքով սխալ է: Երբ մենք այդ շափը դնելու լինենք՝ այն ժամանակ Բօրկմանն էլ է Իբսէն, ինչպէս և Բրանդը և ուրիշ շատ հերոսներ: Այն ինչ իրողութիւնն այն է, որ այս հերոսներից ոչ մէկը ուղղակի անկարող է Իբսէն համարուել, այլ զուցէ կրում է միայն հեղինակի քնատրութեան այս կամ այն գիծը իր մէջ: Միւս կողմից Բուբէկին համարելով Իբսէն՝ Հէրման Տիւրկի նման մի տաղանդաւոր գրող հետեւեալ ազդուող կարծիքն է յայտնում—«Իբսէնի համոզմունքով իդէալական կեանքը՝ կեանք չէ... Այն ամենը, ինչ որ իդէալական է կեանքի ոտխն է»:

ւական չէ. նա գործեց և երկրորդ սխալը—փորձեց այս կորուստը փոխարինել⁴։ Բայց շատ շուտ համոզուեց, որ կեանքի մէջ կան գանձեր, որոնք միայն անփոխարինելի են։

Նոյնքան, գուցէ և աւելի բանալ կը լինէր Բուբէկից պահանջուելիք ջերմութիւնը կապել լոկ զգայական հաճոյքի, Իրենէին «շօշափելու» հետ։ Այդ ջերմութիւնը սիրոյ և կարեկցութեան այն զգացմունքն է, այն սրտաբուլիս հուրը, որի առաջ եսականութեան սառոյցը հալւում, գոլորշիանում է և որի կայծերը Իրենէն եթէ նոյն իսկ ազօտ լոյսով նշմարած լինէր—

երբէք չէր անբաղդանայ։

Անհատական և ուրիշի «ես»-ի համերաշխութիւն, կեանքի և իդէալի ներդաշնակութիւն—և ոչ թէ անհաշտութիւն, փոխադարձ ժխտում—անա Իրենէն «դրամատիկական վերջաբանի» իմաստը, որ և կարմիր թելի նման անցնում է նրա համարեաբոլոր ստեղծագործութիւնների շարքով։

Սրանով մենք ծանօթացրինք ընթերցողին Իրենէնի բոլոր դրամաների հետ—մի բան, որ պէտք է խոստովանենք՝ մեր սկզբնական ծրագրից դուրս էր։ Սակայն նախ քան վերջացնելը՝ աւելորդ չենք համարում տալ մի քանի լրացուցիչ և ամփոփ տեղեկութիւններ Իրենէնի գրական նշանակութեան և նրա աշխարհահայեացքի հիմնական տարրերի մասին։

Եթէ ամեն մի անհատ իր ժամանակի և միջավայրի ծրնունդն է—կան և բացառիկ, ընտրեալ անհատներ, որոնք իրանց ժամանակի և միջավայրի վրայ դնում են ինքնուրոյնութեան մի դրօշ—այն, ինչ որ իւրացրել են միջավայրից արդաստուրում, արդիւնաւորում են և իբրև սեփական, ինքնուրոյն հանճարի արտադրութիւն աւանդում իրանց շրջապատողներին և յետնորդներին։ Այս հաղուագիւտ ընտրեալների շարքին է պատկանում նաև Իրենէն։

Այս օտարօտի, բայց հանճարեղ նօրվէդացին բուն սկանդինաւեան բերք է, հիւսիսային մոայլ երկրների և դժգոյն արևի իսկական պտուղ։ Սկանդինաւեան, Ֆեօրդների մշտաշառաչ աւլիքների նման՝ փոխանցելի արամադրութիւնների, խօսկան երազների, վառլուռն ցնորքների, խորիմաստ միստիցիզմի հայրենիքն է։ Գերմանական ցեղի ճոխ դիցաբանութիւնը միայն սկանդինական բնութեան գրկում կարող էր ստանալ այն ահարկու վարիանտները, որոնք իրանց տեսալուծ միանգամայն անզուգական են։ Եւ ի՞նչ—Իրենէնի բօմանտիկական շրջանի դրամաների աղբիւրը միթէ այդ նոյն դիցաբանութիւնը չէր, միթէ հիւսիսային մոայլ բալլադները չէին։

Հիւսիսային բանաստեղծները, համարեա առանց բացառութեան, մտածող բանաստեղծներ են—և իրենց Սկանդինավիայի ամենամեծ մտածող բանաստեղծն է՝ Նա ոչ միայն բանաստեղծ, այլ և փիլիսոփայ է և նոյն իսկ շատ նորոգ մի փիլիսոփայ, որ իր խորհրդածութիւններին տալիս է զեղարուեստական-բանաստեղծական արտայայտութիւն, որովհետեւ բանաստեղծական կրակը այսպէս թէ այնպէս գերակշռող է իր մէջ։ Եթէ իր հայրենակից միւս բանաստեղծները, մանաւանդ նորագոյնները, սիրում են յափշտակուել իրանց փաթեթով և ահարկու բնութեան խորհրդաւորութեամբ—իրենց՝ առանց այդ նոյն բնութեան ազդեցութիւնը թօթափելու, աւելի յափշտակում է կեանքի խորհրդաւորութեամբ և այս պատճառով քրքրում է պրօբլէմ պրօբլէմի յետեւից, առեղծուած առեղծուածի յետեւից, որոնք ցայտում են կեանքի աղբիւրից։

Իր չղապատող բնութեան և կեանքի խորհրդաւորութեան մէջ պէտք է որոնել այն միատիցիդմը, որ թէեւ տարբեր աստիճանաւորումներով, բայց համարեա սկզբից մինչեւ վերջ նկատելի է նրա զրամանկութեամբ Այս միատիկականութիւնը կրօնական հակումների հետ, ի հարկէ, ոչ մի կապ չունի, այլ ինքնամիտի խորհրդածութիւնների և աւելի ճիշտ, բուն սկանդինավեան զգացմունքի ծնունդ է։

Դրամատիկական տեխնիկայի մէջ իրենցից ցոյց տուած կատարելութիւնը մի կողմ թողած՝ բաւական է կանգ առնել այն հանճարեղ ընդունակութեան վրայ, որով նա քրքրում, վեր է լուծում մարդկային հոգին՝ իր բոլոր խորհրդաւորութիւններով։ Այնպէս որ իրենք նեղ մտքով նատուրալիստ չէ. նա երեւոյթները միայն դիտել և անփոփոխ նկարագրել չը գիտէ, այլ կերպարանաւորել, ինքնուրոյն դրօշմ տալ։ Նա ոչ միայն երեւոյթները իր սեփական տեմպերամէնտովն է գունաւորում—ինչպէս պահանջում էր Զօլան իսկական նատուրալիստից—այլ և որոշակի կերպով ցոյց է տալիս իր անհատականութիւնը։ Առանց այս անհատական դրօշմի անմտածելի է և ոչ մի մեծաշուք զրամատիկական ստեղծագործութիւն։ Եւ անհատականութեան ամեն մի ինքնայայտարարումը ընդհանրապէս մի ըմբոստ գործողութիւն է տիրող կարգերի և հայեաղքների դէմ։ Իրենց ոչ միայն կեանքը այլ և բանաստեղծութիւնը համարում է մի «կոնի»։ Եւ նա իր առաջին զրամայից—«կատիլնայից»—սկսած հանդիսանում է իբրեւ մի ըմբոստ, մաքառող ոգի, որ իր համար «բաց ճակատով» նոր շաւիղներ էր որոնում։ Դժգոհ, անբաւական իր ժամանակուայ հասարակական կարգերից՝ նա անխնայ կերպով հարուածում, մտրակում է զանազան «սրբագործ-

ուած՝ սկզբունքների ձեւերը—և՛ սխալ ըմբռնուած ամուսնութիւնը և՛ սէրը և՛ բարեկամութիւնը և՛ հիւանդոտ իգէալիզմը և այլն: Եւ որովհետեւ զփգոհութեան ամեն մի արտայայտութիւն սկզբնապէս դեռ բացասական է, քան թէ դրական—այս պատճառով նա աւելի շատ քանդող, աւերող է՝ քան թէ կառուցանող: Նոր իգէալների մշուշի մէջ դեռ եւս տարուբերութիւն՝ նրա բուն ցանկութիւնն է խորտակել, հերքել, բացասել այն ամենը, ինչ որ ինքը վնասակար է համարում: Իսկ հին կարգերի ներկայացուցիչները, ճահճացած կեանքի երկրպագուները իրանց չընկալաող ազականուած հոսանքն ալիկոծող ոյժին յայտարարելին «անբարոյական», «խելադար», «անիշխանական» և այլն: Բայց Իբսէնի հակառակորդները մի խոշոր թիւրիմացութեան մէջ էին, նրանք անընդունակ էին ըմբռնելու, որ մեծ դրամատուրգի մտրակողական հարուածներն ուղղուած են ոչ թէ վերոյիշեալ սկզբունքների դէմ՝ քսիմքեան, այլ այդ սկզբունքներին համապատասխանող սխալ հասկացողութիւնների, վտանգաւոր ձեւերի դէմ: Այս անպէտք, վնասակար և վերանորոգութեան կարօտ կարգերի քարայնող ճնշումն է, որ նրան շատ անգամ պաշարում է մոայլ յոռեսեսութեան ամպերով: Սակայն այս մոայլ ամպերի միջից համարեա միշտ անպակաս են եղել նաեւ կենսատու օպտիմիզմի ճառագայթները: Այս փրկարար օպտիմիզմը յատուկ է առհասարակ այն բոլոր ստեղծագործող ոգիներին, որոնք հանդէս չեն եկել լոկ իբրեւ աւերողներ, այլ և վերանորոգողներ: Իբսէնն էր իր երիտասարդական խանդավառ շրջանից յետոյ՝ մտրակողական ուժգին հարուածների հետ միասին պարզեց և իր դաւանանքի—ազատութեան, ճշմարտութեան, առողջ, անհատականութեան, իսկական սիրոյ եւ կենսունակ իդէալիզմի—գրոշակը:

Եւ ահա մեծ դրօշակագիրը, հիւսիսի հանճարեղ «մենաւորը» գուցէ այժմ էլ՝ իր կեանքի վերջալոյսում խորաթափանց հայեացքը դէպի ապագան յառած նոր մոորումներով, նոր պրօբլեմներով է պաշարուած: Հաւատանք, որ նա տուեց իր դրամատիկական վերջաբանը—մենք կասկածում ենք:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ